Ազգ
Azg
18 ՅՈՒԼԻՍ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 129(4981)
ISSN: 1829-1651

# Վաղը Արցախը 6-րդ անգամ նախագահ կընտրի


*Վիտալի Բալասանյան*


*Բակո Սահակյան*


*Արկադի Սողոմոնյան*

Այսօր Արցախում լռության օր է: Լուռ են տեղական լրատվամիջոցները, նախագահի թեկնածուներն ու նախընտրական շտաբների ղեկավարները: Այլ կերպ ասած՝ ընտրողներին տրվում է մեկ օր ժամանակ՝ կողմնորոշվելու եւ առաջիկա հինգ տարվա համար իրենց եւ երկրի համար կարեւոր որոշում ընդունելու: Նախագահական ընտրություններում ներկայացվել է 3 թեկնածու՝ գործող նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ ԱԺ պատգամավոր Վիտալի Բալասանյանն ու Ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի պրոռեկտոր Արկադի Սողոմոնյանը: Երեք թեկնածուների հետ հարցազրույցներն **«Ազգ»** օրաթերթը նախորդ շաբաթ ներկայացրել է ընթերցողներին: Նրանք խոստանում են, որ կյանքը կդարձնեն առավել հարմարավետ, լուրջ ուշադրություն կդարձնեն սոցիալական ուղղվածությանը, բանակի խնդիրներին ու արտաքին քաղաքականությունում կփորձեն արձանագրել առաջխաղացում: Սա ԼՂՀ-ում անկախություն ստանալուց հետո 6-րդ նախագահական ընտրությունն է: Մինչ այդ անցկացված բոլոր ընտրություններում տեղական եւ միջազգային դիտորդները արձանագրել են առաջընթաց եւ ժողովրդավարական մթնոլորտ:

*Տես էջ 3*

# Սառեցված գոմեշի միս եւ փողերի լվացում Մարտունի-2 զորամասում

**ՊՆ պահեստազորի փոխգնդապետներ Հովհաննես Սարգսյանը, Արա Թադեւոսյանը, ազատամարտիկներ Գարեգին Սերոբյանը, Սամվել Վարդանյանն ու Հրանտ Դանիելյանը, ԼՂՀ ՊԲ N զորամասի նախկին զինծառայող Արմեն Գաբրիելյանն ու Արտյոմ Սահակյանը բաց նամակ են ուղարկել ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին, ԱԺ փոխխոսնակներ Էդուարդ Շարմազանովին եւ Հերմինե Նաղդալյանին՝ պահանջելով ձեւավորել խորհրդարանական հանձնաժողով եւ զորամասում գոմեշի միս մթերող եւ այդ փաստն արձանագրող, բայց լռող անձանց պատասխանատվության ենթարկել:**

**«Բանակում անարդարություններին ոչ» նախաձեռնության վերոնշյալ անդամները մի քանի ամիս առաջ հայտարարություն էին տարածել, որ ՊՆ Հասարակական խորհրդի նախագահ, ՊՆ խորհրդական Գեղամ Հարությունյանը անցյալ տարվա հունիսի երկրորդ կեսին ԼՂՀ Մարտունի-2 զորամասում հայտնաբերել է առավել խոշոր չափերի չարաշահման փաստ, սակայն այդ մասին չի զեկուցել պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին:**

**«Գեղամ Հարությունյանի հանձնաժողովը պարզել է, որ այդ զորամասում զինվորներին հնդկական սառեցված գոմեշի մսով սնունդ են տալիս, զինվորները հրաժարվում են այդ սնունդից, սակայն այդ մասին Օհանյանին չի տեղեկացրել», գրում են նախաձեռնության անդամները:**

**Կատարվածի առնչությամբ ՊՆ քննչական ծառայությունը հարուցել է քրեական գործ: «Մենք ունենք մտավախություն, որ քրեական գործը կարող է ծածկադմբոց արվել, քանի որ ՊՆ քննչական ծառայությունում որպես քննիչ աշխատում է Գեղամ Հարությունյանի եղբոր՝ Արցախի զինկոմ Սամվել Հարությունյանի որդին: Իսկ եթե հաշվի առնենք, որ փողերի լվացման այդ խոշոր գործարքի մեջ բացի Գեղամ Հարությունյանից ներքաշված կլինեն բազմաթիվ ազդեցիկ դեմքեր, ապա մտավախությունը, որ քրեական գործը կարող է ծածկադմբոց արվել, հիմնավոր է»:**

**Նրանց ներկայացմամբ՝ գործում առկա է երկու հանրային մեծ վտանգ պարունակող ապօրինություն: «Բյուջեով հատկացված են գումարներ բանակի անձնակազմի համար տեղական թարմ տավարի միս մթերելու նպատակով, բայց տվյալ դեպքում թարմ մսի փոխարեն մթերվել է մի քանի անգամ էժան հնդկական գոմեշի սառեցված միս: Մեր զինվորների նկարագրությամբ՝ այդ միսն անհնար էր ծամել, ձիգ էր եւ տհաճ հոտ ուներ: Ակնհայտ է փող լվանալու հանգամանքը, ինչը առավել խոշոր չափերի չարաշահում է», ասում են նախաձեռնության անդամները: Բացի դրանից, փաստը բացահայտելն ու նախարարին չզեկուցելն արդեն լուրջ խախտում է: Նրանք փաստում են, որ Գեղամ Հարությունյանի ներկայությամբ բազմիցս զինվորները հրաժարվել են սննդից, փաստն արձանագրել են ստուգող հանձնաժողովի անդամները՝ Հակոբ Թադեւոսյանը եւ Նորայր Նորիկյանը, սակայն նախարարին չեն տեղեկացրել:**

**«Զինվորների սննդի հաշվին փող լվանալը անբարոյականություն եւ դավաճանություն է», ասում են նախաձեռնող խմբի անդամները՝ տեղեկացնելով, որ շուտով կձեւավորվի ՊՆ նոր Հասարակական խորհուրդ, եւ Գեղամ Հարությունյանը կրկին ցանկանում է զբաղեցնել այդ պաշտոնը, մինչդեռ չարաշահման համար պատիժը կլինի լավագույն օրինակը, որպեսզի հետագայում նման դեպքերը կանխարգելվեն:**

**Երեկ «Ազգ»ը զանգահարեց Գեղամ Հարությունյանին, սակայն նա չցանկացավ խոսել՝ հայտարարելով, որ ինքը չի ուզում որեւէ բան ասել:**

Հ. Հ.

# Ոչ թե սրճարան, այլ՝ սանհանգույց

**Աբովյան 19 հասցեում ընթացող շինարարության մասին Երեւանի քաղաքապետարանը տարածել է հայտարարություն, որտեղ նշված է, որ այս հասցեում վերակառուցվում է հասարակական ստորգետնյա սանհանգույցը:**

**Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանձնարարել է աշխատանքների իրականացման վայրում փակցնել համապատասխան տեղեկատվական ցուցանակ եւ ձեռնարկել միջոցներ՝ հանրությանն իրազեկելու ընթացող աշխատանքների մասին:**

**Կատարվող շինարարությանը «Ազգը» երեկվա համարում դարձյալ անդրադարձել է: Երկուշաբթի օրը լրագրողներիս աշխղեկը տեղեկացրել էր, թե Աբովյան 19-ում կառուցվելու է սրճարան, ինչի համար իրենք ունեն քաղաքապետարանի թույլտվությունը: Իսկ այսօր Երեւանի քաղաքապետը հանդես է եկել այլ հայտարարությամբ:**

**«Աբովյան փողոցում մենք մեծ աշխատանքներ ենք տարել, եւ որեւէ կամայական շինարարություն այստեղ չի ընթանում: Հաշվի առնելով Աբովյան փողոցում հետիոտների մեծ հոսքը՝ սեփականատիրոջ հետ համատեղ նախաձեռնվել են հասարակական սանհանգույցի վերակառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն հնարավորինս սեղմ ժամկետում», ասել է Տարոն Մարգարյանը:**

**Տարածքը սանհանգույցի համար իհարկե բավականին մեծ է ու առաջին հայացքից էլ անհարմար, իսկ եթե հաշվի առնենք, որ Աբովյան 19-ից փոքր-ինչ վերեւ գտնվող գետնանցումում հասարակական սանհանգույց արդեն կա, ապա նոր սանհանգույցի կառուցումը դառնում է նաեւ անտեղի: Եթե սրան էլ գումարենք աշխղեկի պատասխանը սրճարան կառուցելու մասին, ապա կասկածները դարձյալ տեղի չեն տալիս:**

**Իսկ քաղաքապետարանի հայտարարությունը սպառիչ պատասխաններ չի տալիս եւ չունի բացատրություն, թե ի՞նչ վնաս է հասցվել հաստաբուն ծառերի արմատներին:**

Ի. Պ.

# HSBC-ն մեղադրվում է ահաբեկիչներին օգնելու մեջ

ԱՄՆ Սենատի հետաքննությունների մշտական ենթահանձնախմբի աշխատանքի արդյունքները վկայում են, որ Եվրոպայի խոշորագույն ֆինանսական կառույցներից մեկը՝ Բրիտանական HSBC բանկը, գաղտնաբար միջոցներ է փոխանցում Իրանի, Մեքսիկայի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի եւ Կայմանյան կղզիների տարածքներում գործող անօրինական կազմակերպություններին եւ թմրակարտելներին: Դրանով բանկը խախտում է ահաբեկիչների, թմրաբարոնների եւ բռնապետական վարչակարգերի հետ գործառնությունների իրականացման վրա ԱՄՆ-ի հաստատած պատժամիջոցները: Այս մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով ենթահանձնախմբի հրապարակած 340-էջանոց հաշվետվությունը:




Ենթահանձնաժողովի անդամներն ուսումնասիրել են 1,4 մլն զանազան փաստաթղթեր, զրուցել բանկի վերին եւ միջին օղակի 75 աշխատակիցների հետ:

Մասնավորապես բացահայտվել է, որ տվյալ բանկի երկու մասնաճյուղեր 7 տարվա ընթացքում 19,4 մլրդ ընդհանուր գումարով դեպի Իրան 25 հազար փոխանցում են կատարել HSBC-ի հաշիվների միջոցով: Բացի դրանից, բանկը գործառնություններ է կատարել Սաուդյան Արաբիայի եւ Բանգլադեշի ֆինանսական կառույցների հետ, չնայած հաստատված էր դրանց կապը ահաբեկչական կազմակերպությունների հետ: Դրա հիման վրա HSBC-ն մեղադրվում է ահաբեկչությանն օժանդակելու մեջ:

Հաղորդվում է, որ բանկի ղեկավարությունն ակտիվորեն գործակցում է քննիչների հետ եւ պատրաստակամություն է հայտնում ընդունելու իր մեղքը:

# «Հայերը պատասխանատու չեն Բալկաններում, Կովկասում սպանված միլիոնավոր մահմեդականների համար»

## *Հայտարարում է Թաշդեմիրը՝ թերի համարելով Դավութօղլուի «1915-ի հարցում» ցուցաբերած մոտեցումը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հուլիսի 12-ին «**Ազգում**» անդրադարձել էինք «1915-ի հարցում» Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի, այսպես կոչված, նոր մոտեցմանը, ընդգծելով, որ մոտեցումը թուրքական ժխտողականության նորովի ձեւակերպումն է՝ հարմարեցված նոր պայմաններին: Անդրադարձի համար հիմք էր ծառայել «Ռադիկալի» հեղինակ Ահմեդ Ինսելի նույն թերթի հուլիսի 10-ի համարում հրապարակված հոդվածը:

Ի դեպ, երբ Ինսելը քննարկում էր Դավութօղլուի այս մոտեցումը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը դեռեւս պատրաստվում էր հանդիպել ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներին՝ քննարկելու Հայոց ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող նոր օրինագծի հարցը:

Հուլիսի 16-ին Ելիսեյան պալատում նախագահ Օլանդն իր խորհրդականների հետ ընդունեց Ֆրանսիայի հայկական միությունների հանձնախմբի անդամներին: Հենց այդ օրը Դավութօղլուի «1915-ի հարցում նոր մոտեցում» դրսեւորելու պատրաստակամությանը «Սաբահի» էջերում Վաշինգտոնից անդրադարձավ Օմեր Թաշփընարը: «Ռադիկալի» եւ «Սաբահի» անդրադարձը հիմք է տալիս այսպես կոչված նոր մոտեցումը պայմանավորելու ժխտողականությունը քրեականացնող ֆրանսիական առաջիկա օրինագծով, ինչպես նաեւ Մեծ եղեռնի հետզհետե մոտեցող 100-րդ տարելիցով:

Սա ենթադրում է ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետագա ծավալման կասեցումը, ինչին ուշիմ աշակերտի պատրաստակամությամբ լծված է Օմեր Թաշփընարը, որը «Ջոն Հոփկինս» համալսարանի դասախոս է եւ Պատերազմի հարցերով ազգային քոլեջի պրոֆեսոր: Ահա թե ինչ է գրել. «Անցյալ շաբաթ Փարիզից վերադառնալիս լրագրողների ներկայությամբ Դավութօղլուն վերստին արծարծել է այն հասկացությունը, որը նա երկար ժամանակ օգտագործում է 1915-ի առնչությամբ: Խոսքը «արդարամիտ հիշողություն» եզրի մասին է: Դավութօղլուն ասում է. «Ես այն նախարարը չեմ, որ ասեմ «1915-ին ոչ մի բան չի պատահել»: Ինքս իրադարձությունները որպես ցեղասպանություն չեմ որակում, բայց չեմ առարկի որակողներին: Այդ հարցում մեզ նոր մոտեցում է պետք դրսեւորել: Հարկ է ասել, որ չենք ուրանում նրանց վիշտը, ըմբռնումով ենք մոտենում, եկեք այն, ինչ անհրաժեշտ է, անենք միասին: Սակայն անելիքը չպետք է հանգեցնի միակողմանի մեղադրական եզրակացության»:

*Տես էջ 2*

# Բջջային կապի նորարարական տարածաշրջանային լաբորատորիա Հայաստանում

## *Համաշխարհային բանկի եւ infoDev-ի զեկույցի համաձայն՝ աշխարհի երեք քառորդին հասանելի է բջջային կապը*

Ինչպես տեղեկացանք Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակից, աշխարհում շարժական կապին բաժանորդագրված են 6 միլիարդ մարդ՝ 2000-ի 1 միլիարդից ցածր ցուցանիշի համեմատ։ Բջջային հեռախոսն այժմ հասանելի է աշխարհի բնակչության շուրջ երեք քառորդին։ «Տեղեկատվությունը եւ հաղորդակցությունը հանուն զարգացման-2012, շարժական հեռախոսակապի առավելագույն օգտագործումը» զեկույցի համաձայն՝ 2011-ին ներբեռնվել է բջջային հեռախոսի ավելի քան 30 միլիարդ կիրառական ծրագիր՝ ծրագրային ապահովում, որն ընդլայնում է հեռախոսների հնարավորությունները, դրանք դարձնելով, օրինակ, շարժական դրամապանակներ, նավիգացիոն միջոցներ կամ գների համեմատության գործիքներ։ Զարգացող երկրներում քաղաքացիներն ավելի հաճախ են օգտագործում բջջային հեռախոսները՝ ապրուստի նոր միջոցների ստեղծման եւ իրենց ապրելակերպի բարելավման համար, իսկ կառավարությունները դրանք օգտագործում են ծառայությունների մատուցումը եւ քաղաքացիների հետ հետադարձ կապի մեխանիզմները կատարելագործելու համար։

«Շարժական կապի հեղափոխությունը գտնվում է իր աճի կորի ճիշտ սկզբնամասում. շարժական սարքերն աստիճանաբար էժանանում եւ հզորանում են, իսկ ցանցերի թողունակությունը գրեթե 18 ամիսը մեկ կրկնապատկվում է եւ ընդլայնվում գյուղական վայրերի ուղղությամբ», նշում է Համաշխարհային բանկի ՏՀՏ քաղաքականության ոլորտի գլխավոր մասնագետ եւ զեկույցի հեղինակներից մեկը՝ Թիմ Քելլին։

Զեկույցում նշվում է, թե աշխարհի երկրներն ինչպես են օգտագործում այս ներուժը։ Օրինակ՝ Հնդկաստանի Կերալ նահանգում 2010 -ի դեկտեմբերին mGovernment ծրագրի մեկնարկից հետո տեղադրվել է 20-ից ավելի կիրառական ծրագիր եւ դյուրացվել կառավարության եւ քաղաքացիների միջեւ 3 միլիոնից ավելի շփում։ Քենիան «շարժական կապը հանուն զարգացման» ոլորտում որպես առաջատար է հանդես գալիս ՝ հիմնականում պայմանավորված M-PESA շարժական կապի միջոցով վճարումների էկոհամակարգի հաջողությամբ։ Պաղեստինում «Սուկթելի» JobMatch ծառայությունը երիտասարդներին օգնում է աշխատատեղեր գտնելու հարցում։ Ծառայությունից օգտվող քոլեջի շրջանավարտները նշել են, որ աշխատանք փնտրելու վրա ծախսում են ավելի քիչ ժամանակ ՝ միջինը տասներկու շաբաթից մեկ կամ պակաս շաբաթ, իսկ աշխատավարձերը բարձրացել են մինչեւ 50 տոկոսով։

Հաշվետվությամբ շեշտադրվում է կառավարությունների դերը բջջային կիրառական ծրագրերի մշակումը հնարավոր դարձնելու հարցում։ Այն ընդգծում է նաեւ, թե ինչպես շարժական կապի նորարարական լաբորատորիաները՝ ծրագիր մշակողների ուսուցման եւ նորաստեղծ ընկերությունների ինկուբացիայի համար համատեղ օգտագործվող տարածքը, կարող են օգնել նոր կիրառական ծրագրերի մուտքը շուկա ապահովելու հարցում։ Օրինակ՝ infoDev-ը, Ֆինլանդիայի կառավարության եւ «Նոկիայի» հետ համատեղ, Հայաստանում, Քենիայում, Պակիստանում, Հարավային Աֆրիկայում եւ Վիետնամում ստեղծել է բջջային կապի նորարարական հինգ տարածաշրջանային լաբորատորիաներ (mLabs)։

«Բջջային կիրառական տեխնոլոգիաների վրա հիմնված ձեռնարկությունների մեծ մասը գտնվում է զարգացման վաղ փուլում, սակայն ունի զբաղվածության եւ տնտեսական հսկայական ներուժ՝ նման 1980-ականներին եւ 1990-ականներին ծրագրային ապահովման ոլորտի ներուժին։ Անհրաժեշտ է ձեռներեցներին օժանդակել գործարար կապերի ստեղծման եւ ինկուբացիայի հարցում՝ այդ ներուժի օգտագործումն ապահովելու համար», սա էլ infoDe ծրագրի ղեկավար Վալերի դը Կոստայի կարծիքն է։

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



# Հերհերի ջրվեժը՝ գրեթե ցամաքած

**Հերհերի ջրվեժը, որ բնության հուշարձանների ցանկում է, գրեթե ցամաքած է։ Այսօր ջրվեժից շատ քիչ քանակությամբ ջուր է թափվում։ Արփա գետի աջակողմյան Հերհեր վտակի վրա երկու փոքր ՀԷԿ-եր են կառուցված, որոնք բնապահպանական խախտումներով են աշխատում։**



**«Թռչկան» նախաձեռնության անդամները երեկ դիմել են բնապահպանության նախարարությանը՝ խնդրելով ուսումնասիրել եւ պարզել, թե Հերհերի կառուցված ՓՀԷԿ-երի սեփականատերերն ինչպե՞ս են խախտել բնապահպանական նորմերն ու չորացրել գետի հունը, ինչի հետեւանքով վերացել է կենսաբազմազանությունն ու զգալի վնաս է պատճառվել էկոհամակարգին։ Բնապահպանության նախարարությունից «Ազգ»-ին տեղեկացրին, որ նախարար Արամ Հարությունյանը ոչ միայն տեղյակ է խնդրին, այլեւ բնապահպանական պետական տեսչությանը հատուկ հանձնարարական է տվել ուսումնասիրելու հարցը։ Գերատեսչությունից հավաստիացնում են՝ սեղմ ժամկետներում կկատարեն անհրաժեշտ ուսումնասիրություններն ու դրանք կներկայացնեն հանրությանը։**

**Հիշեցնենք, որ սա առաջին դեպքը չէ, երբ բնության հուշարձան ջրվեժը կանգնում է լուրջ խնդրի եւ ցամաքման վտանգի առաջ։ Նախորդ տարի նման լուրջ վտանգի առաջ էր կանգնած Թռչկանը եւ մի քանի ամիս տեւող ակցիաների, նստացույցերի միջոցով Թռչկանը փրկվեց։**

**Հ. Հ.**

# «Փյունիկ» հիմնադրամը օժանդակում է ԱԻ նախարարությանը

**Այսօր մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական «Փյունիկ» հիմնադրամի պատվո նախագահ Գաբրիել Ջեմբերջյանը, հոգաբարձուների խորհրդի նախագահ Լեւոն Սարգսյանը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանին կհանձնեն նախարարության կարիքների համար 50 համակարգիչ եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի շտապօգնության մեկ ավտոմեքենա, որը սպասարկելու է ԱԻՆ նորակառույց պոլիկլինիկան։**

**Ս. Ս.**

# Շենգավիթ հնավայրում կրկին հնագիտական պեղումներ են

**Հունիսի 19-ից մեկնարկել են Հայաստանի վաղ երկրագործական ամենից նշանավոր հուշարձաններից մեկի՝ Շենգավիթի հնագիտական պեղումները։ Պեղումներն իրականացնում են հայկական եւ հայ-ամերիկյան 2 արշավախմբեր։ Որպես պեղումների ձեռնարկող հանդես են եկել Երեւանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը եւ ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը։ Ամերիկյան կողմը ներկայացնում է Փենսիլվանիայի Ուայդների համալսարանի մարդաբանության ամբիոնի պրոֆեսոր Միթչել Ռոթմանը։ Հայկական արշավախումբը ղեկավարում է պատմ. գիտ. դոկտոր Հակոբ Սիմոնյանը։ Վերջինս «Ազգի» հարցին պատասխանելով՝ ասաց. «Պեղումները նպատակ են հետապնդում բացահայտել հնավայրում պաշտպանական համակարգի առկայությունը, ինչպես նաեւ կատարել նոր ճշգրտումներ ճարտարապետական կառույցների եւ շերտագրության վերաբերյալ։ Նախատեսվում է նաեւ հայտնաբերված կառույցների որոշ հատվածների ամրակայում»։**

**Պեղումները կշարունակվեն մինչեւ 2012 թ. օգոստոսի 10։ Շուրջ 50 անդամներից բաղկացած արշավախմբերը համալրված են ոչ միայն բազմադիսցիպլին ուսումնասիրությունների համար անհրաժեշտ մասնագետներով, այլեւ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներով։ Հետաքրքրական արդյունքների դեպքում պեղումները կարող են շարունակվել նաեւ աշնանը։**

**Ս. Ս.**

# Ի գիտություն մրցույթից դուրս մնացած դիմորդների

**ՀՀ պետական եւ ոչ պետական բուհերի առկա ուսուցման 2012 թվականի ընդունելության անվճար եւ վճարովի ուսուցման մրցույթների արդյունքները հրապարակվել են հուլիսի 15-ին։ Ընդունելության քննություններից դրական միավոր (միավորներ) ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ը կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին՝ թափուր տեղեր ունեցող բուհում լրացնելով նոր դիմում-հայտ։ Թափուր տեղերի մրցույթին կարող են հայտ ներկայացնել նաեւ ընդունելության քննություններից դրական միավոր (միավորներ) ստացած այն դիմորդները, ովքեր առաջին կամ լրացուցիչ փուլերում բուհերում չեն հայտագրվել։**

**Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները կհաստատի հուլիսի 25-ին։**

# «Հայերը պատասխանատու չեն Բալկաններում, Կովկասում սպանված միլիոնավոր մահմեդականների համար»

*1-ին էջից*

«Արդարամիտ հիշողություն» եզրը Դավութօղլուն պարզաբանում է հետեւյալ կերպ. «Մենք նման չենք գերմանացիներին։ Մեր պատմության մեջ գոյություն չունի էթնիկ ջարդի գաղափարը։ Փոխարենը կան մահմեդականների՝ Բալկաններում, Կովկասում կրած կորուստները, մտահոգությունն ու սարսափը։ Նրանք նաեւ Անատոլիայից վտարվելու խուճապ են ապրել, իսկ դա որոշակի բաների պատճառ է դարձել։ Սակայն դա չի եղել մի ամբողջ ցեղի չեզոքացմանն ուղղված գաղափարախոսական ռեֆլեքս։ Եթե այս հոգեվիճակը նույնացնեն նացիզմի հետ եւ մեզ ներկայացնեն որպես մարդասպան ցեղի, դա արդեն անընդունելի կլինի»։

Թուրքիան հարցին մոտենում է 2015-ի, այսինքն՝ 1915-ի 100-րդ տարելիցի տեսանկյունից։ «Արդարամիտ հիշողության» եզրին նույն տեսանկյունից մոտենալու դեպքում կտեսնենք, որ դրա հիմքում դրությունը հավասարակշռելու որոնումներն են։ Այն առումով, որ նշված հիշողությունը չի հերքում ողբերգությունը, միաժամանակ ընդգծում, որ դա միայն հայերով չի սահմանափակվել։ Նրանց հետ միլիոնավոր թուրքեր եւ մահմեդականներ կոտորվել են, վտարվել իրենց հայրենի օջախից, հետեւաբար վիշտն ընդհանուր է։

Որքան էլ այս մոտեցումը խոհեմ եւ ըմբռնելի թվա Թուրքիայի տեսակետից, ցավոք չի կարող դրական ազդեցություն ունենալ Հայաստանի եւ հայկական սփյուռքի վրա, ինչպես որ ակնկալվում է։ Պատճառն ակնհայտ է, որովհետեւ հայերը պատասխանատու չեն օսմանյան վերջին շրջանում մահացած կամ սպանված միլիոնավոր մահմեդականների համար։ Այս մոտեցմամբ պարզապես փորձ է արվում հայերին հասկացնել. «Դուք էլ փորձեք մեր վիշտը հասկանալ»։ Եթե այստեղ նպատակը նախքան 2015-ը Հայաստանի ու հայերի հետ հաշտվելն է, ապա այս մոտեցումը կթուլացնի հնարավոր վշտակցության ազդեցությունը։ Հայերը բռնության եւ անարդարության համար ներողություն, առնվազն ըմբռնում են ակնկալում։ Հիրավի Բալկաններում, Դարդանելում, Եմենում զոհեր ենք տվել։ Սակայն սպասել, որ հայերը ցավ զգան այդ զոհերի համար՝ իրատեսական չէ, քանզի Բալկաններում, Դարդանելում, Մերձավոր Արեւելքում օսմանցիների ողբերգության համար ո՛չ Հայաստանն է մեղավոր, ո՛չ էլ հայությունը»։

Այլ կերպ, Թաշդեմիրը անբավարար է համարում «1915-ի հարցում» Դավութօղլուի ցուցաբերած մոտեցումը եւ պահանջում է, որ արմատապես վերանայի դա, եթե իսկապես մտադիր է Թուրքիային ձերբազատել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի հոգսերից։

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Իլհամ Ալիեւը արդեն չի՞ վերահսկում

ԵԱՀԿ Մինսկի համանախագահների տարածաշրջանային վերջին «վոյաժը» հետաքրքրական էր: Նախ նրանք Բաքվում չհանդիպեցին «ԼՂ ադրբեջանական համայնքի ղեկավարության» հետ: Ի դեպ, սա արդեն երկրորդ դեպքն է: Երկրորդ, համանախագահները ԼՂՀ-ից Հայաստան մեկնեցին Քարվաճառով: Երրորդ, թերեւս անսպասելի էր, որ տարածաշրջանային այցի արդյունքներով հայտարարության մի զգալի մասը նվիրված էր Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման հետ կապված քննարկումներին:

Մանավանդ այս պահը խիստ ուշագրավ է նրանով, որ ադրբեջանական կողմը փորձ արեց քարոզչական ֆոն ստեղծելու, թե համանախագահները ոչ թե արձանագրել են հարցում կողմերի հետ բանակցություններից ունեցած ընդհանուր պատկերի, այլ «կողմերին կոչ են արել»: Տարբերությունը անշուշտ մեծ է: Քանի որ համանախագահների ասածից հստակ եզրակացվում է, որ Ադրբեջանը պարտավորվել է քաղաքացիական օդանավերի դեմ ուժ չկիրառել, մինչդեռ Բաքուն ներկայացրեց այնպես, թե միջնորդները «միայն հորդորել են»: Ադրբեջանի ԱԳՆ-ն հանդես եկավ արտառոց հայտարարությամբ, որտեղ վերստին պնդում էր այդ երկրի «սուվերեն օդային տարածքի անխախտելիության» հանգամանքը:

Ավելի հեռուն է գնացել «Ազերթաջ» պետական գործակալությունը, որի տարածած հաղորդագրության մեջ բառացիորեն ասված է. «Կարծում ենք, ադրբեջանական կողմին հարկ է վերստին պաշտոնապես հավաստել Հայաստանի կողմից մեր օդային տարածքի խախտման անթույլատրելիության մասին հստակ մտադրությունը եւ բոլոր անհրաժեշտ, ներառյալ ամենածայրահեղ միջոցները կիրառելու իրավունքը, եթե Երեւանը փորձի ստուգել մեր նյարդերի ամրությունը: Իսկ համանախագահների հաջորդ այցելության ժամանակ պահանջել միջնորդներից, որպեսզի չհանդիպեն Բակո Սահակյանի հետ կամ էլ հանդիպեն «երկու համայնքների ղեկավարների» (չակերտները մերն են- Վ.Ա.) հետ»:

«Ազերթաջ»-ը, ինչպես ասացինք, պետական գործակալություն է, որի տարածած տեղեկատվությունը սկզբունքորեն չի կարող չհամապատասխանել պաշտոնական տեսակետին: Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ միջնորդների հայտարարությունը, որտեղ բացահայտ ասված է, որ կողմերը, իրականում՝ պաշտոնական Բաքուն, հավաստիացրել են, որ քաղաքացիական օդանավերի դեմ ուժ չեն գործադրի: Բացառված է, որ համանախագահները ասել են մի բան, որ համաձայնեցված չէ կողմերի հետ: Այսինքն, Ադրբեջանը չէր կարող տեղյակ չլինել, որ Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման բանակցությունների մասին միջնորդների հայտարարության մեջ խոսվելու է:

Եթե այսքանից հետո «Ազերթաջ»-ը պետական պատկան մարմիններին խորհուրդ է տալիս, թե ինչ եւ ինչ ձեւով պիտի արվի, ապա կարելի է երկու ենթադրություն անել: Առաջին, իր սովորության համաձայն Իլհամ Ալիեւը բանակցությունների սեղանի շուրջը մի բան է ասում, իսկ իր ժողովրդին՝ բոլորովին ուրիշ տեսքով ներկայանում: Երկրորդ, Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը բոլորովին էլ միասնական չէ, այնտեղ կան ուժեր, որոնք ունակ են չեղարկելու Իլհամ Ալիեւի հավաստիացումները եւ նրան պարտադրելու իրենց կամքը:

Առաջին դեպքում եզրակացություններ պետք է անեն համանախագահները, թե ինչ մակարդակի եւ բարոյական նկարագրի տեր մարդու հետ են քննարկում լրջագույն հարցերը: Իսկ եթե Իլհամ Ալիեւը արդեն լիովին չի վերահսկում իրավիճակը, եւ նրա թիմը տրոհվել է, ապա հայկական կողմերին արժե վերլուծել իրավիճակը. արժե՞ բանակցություններ վարել մի մարդու հետ, որի խոսքը նույնիսկ թիմակիցների համար արժեք չունի:

Վ. Ա.

# Թուրքական գումարներ՝ լռեցնելու հանրապետական Շմիդտին

Վաշինգտոնից Cincinnati Enquirer թերթի տեղեկացմամբ՝ Մ. Նահանգների Ներկայացուցիչների պալատի անդամներից Ջին Շմիդտը վերջին երեք տարիների ընթացքում «Ամերիկայի թուրքական կոալիցիա» կազմակերպությունից ստացել է ավելի քան 582 հազար դոլար, որից 430 հազարը՝ 2009-2010 թվերին, իսկ 152 հազարը՝ 2011-ին: Ըստ հանրապետական անդամի վերջերս ներկայացրած ֆինանսական հաշվետվության՝ այդ գումարները վճարվել են իրավաբանական ֆիրմաներին ունեցած իր պարտքերը փակելու համար:

Շմիդտը դատական հայցեր էր ներկայացրել հայազգի Դեյվիդ Գրիգորյանի դեմ, երբ վերջինս հայտարարել էր, որ հայերի ցեղասպանության ճանաչման դեմ պայքարելու համար Շմիդտը կեղտոտ փողեր էր ստացել թուրքական կառավարությունից:

Անցյալ տարի Ներկայացուցիչների պալատի էթիկայի հանձնաժողովը բացահայտել էր, որ Շմիդտը նման «անպարկեշտ» նվեր ստացել էր «Թուրքական կոալիցիայից», բայց նշել էր, թե նա տեղյակ չի եղել, որ կոալիցիան է փակում իր պարտքերը: Այդուհանդերձ հանձնաժողովը խնդրել էր այդ ստացված գումարների մասին զեկուցել հաշվետվության մեջ: Լուրը արտատպել էր «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Հ. Ծ.

ԿԱՀԻՐԵ

# Վախճանվել է պատմաբան Հովհաննես Տեր-Պետրոսյանը



**Կահիրեաբնակ ճանաչված մտավորական Պերճ Թերզյանի հուլիսի 15-ի հեռախոսազանգը գուժում էր մահը եգիպտահայ գաղութում հայտնի պատմաբան, տեղվույն ՌԱԿ պաշտոնաթերթ «Արեւ» օրաթերթի երկարամյա աշխատակից եւ նախկին խմբագիր, 1967-ից ՌԱկուսակցության անդամ Հովհաննես Տեր-Պետրոսյանի, որի թաղումը նեղ շրջանակներում կատարվել էր նույն օրը:**

**Հովհաննես Տեր-Պետրոսյանը ծնվել էր Կահիրեում, 1931-ին այնթապցի գաղթական Գրիգորի ընտանիքում: Նախնական ուսումն ստացել էր Նուբարյան ազգային վարժարանում եւ անգլիական «Սեյնթ Օսթընզ» քոլեջում: Այնուհետեւ բարձրագույն կրթությունը՝ «Բրիտիշ ինստիտյուտի» երեկոյան դասընթացներում եւ անգլիական Այ-Սի-Էս արվեստի ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետում: 1960 թվականին թղթակցությամբ ավարտել էր նույն ինստիտուտի Լոնդոնի հեռակա բաժինը:**

**Մասնագետի առաջ բացված հնարավորություններից, սակայն, երիտասարդը չէր կարողացել օգտվել ընտանեկան պայմանների պատճառով: Այդ նույն պայմանները նրան մղել էին զբաղվելու ինքնուսուցմամբ:**

**Նրա կյանքում շրջադարձային կետ կարելի է համարել 1952 թվականը, երբ ծանոթանում է հայտնի մտավորականներ Արշամ Տատրյանի, Հայկ Ժամկոչյանի եւ մանավանդ հմուտ պատմաբան Արշակ Ալպոյաճյանի հետ: Նրա մեջ տեսնելով հայ ժողովրդի պատմությանը նվիրված մի անձնավորության՝ Ալպոյաճյանը հենց նրան է հանձնարարում պատմաբանասիրական նյութերի շուրջը հոդվածներ գրել Կահիրեում, Ալեքսանդրիայում եւ ԱՄՆ-ում լույս տեսնող («Արեւ», «Արաքս» եւ «Պայքար») պարբերականների համար:**

**Հետագայում այդ հոդվածները վերամշակման ենթարկվելով դառնում են արժեքավոր հատորներ: 1975-ին հրատարակվում է Տեր-Պետրոսյանի «Ճէյմս Պրայս եւ հայերը» հատորը: 1976-ին՝ «Հայերու սատարը թուրք մշակոյթին եւ տնտեսութեան»: Այնուհետեւ՝ «Ապրումներ մայր հողին վրայ» (1980), ուր ամփոփված են իր տպավորությունները 1979-ին որպես այդ ժամանակվա Լուսավորության նախարարության եւ սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման դասընթացների մասնակցի: Դրան հաջորդում են «Կրթական շարժումը թրքահայոց մէջ- 1600-1900 թթ.» (1983), «Հայ ժողովուրդին ազատագրական պայքարը ԺԹ դարու Ա. կիսուն» (1988), «Արեւ» օրաթերթի «Մատենագիտութիւն» (Ա. հատոր, 1990), «Մեր յոյզերն ու յոյսերը» (1995 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հրավերով Հայաստան երկրորդ այցելության առթիվ) եւ վերջապես «Հայ ժողովուրդին գոյամարտը. 1550-1930» եռահատոր (1997, 2002 եւ 2009) ուսումնասիրությունները, որոնք հույժ կարեւոր նշանակություն ունեն հայ պատմագրության մեջ:**

**Հոգով ու սրտով նվիրված լինելով հայրենիքին, Տեր-Պետրոսյանը միաժամանակ ակտիվ հասարակական գործունեություն էր ունեցել Եգիպտոսում: Նա երկար տարիներ ղեկավարել է «ՀՄԸՄ-Նուպար» մարզական ակումբի սկաուտական շարժումը, խմբապետի պարտականություններ վարել եւ արժանացել «Քինգ Սկաուտ» բարձրագույն շքանշանին: Բազմիցս պատմական եւ ազգային հարցերով դասախոսություններով հանդես է եկել «Հայ Գեղարվեստասիրաց Միության» եւ ՀԲԸՄ-ի ակումբներում: 1977-ին հրավիրվել է հայ ժողովրդի պատմություն դասավանդելու Նուբարյան ազգային վարժարանում, այնուհետեւ, դոկտ. Ավետիս Յափուջյանի Ավստրալիա մեկնումից հետո, 1990-2003 թվականներին ստանձնել է սփյուռքի հնագույն հայկական պարբերականներից՝ Կահիրեի ՌԱԿ «Արեւ» օրաթերթի խմբագրի պաշտոնը:**

**Շիտակ, սկզբունքային եւ ընկերասեր անձնավորություն էր, որ, սակայն, վերջին տարիներին ստիպված էր միայնակ ապրել:**

**Սերնդակից ընկերների անունից խոնարհվում եմ նրա հիշատակի առաջ՝ հայցելով Աստծուց, որ Եգիպտոսի ասպնջական հողը թեթեւ գա իր հոգնատանջ ոսկորների վրա: Նրա հիշատակը վառ կմնա մեր բոլորի սրտերում:**

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Վաղը Արցախը 6-րդ անգամ նախագահ կընտրի

*1-ին էջից*

Համաձայն ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տարածած հաղորդագրության, հուլիսի 16-ի դրությամբ ընտրողների թիվը կազմում է 98.909: Քվեարկությունը կսկսվի հուլիսի 19-ի առավոտյան ժամը 8-ին եւ կավարտվի երեկոյան ժամը 20:00-ին: Կազմավորվել է 274 ընտրական տեղամաս, որոնցից մեկը՝ ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչությունում՝ ՀՀ-ում ժամանակավորապես գտնվող կամ բնակվող ԼՂՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովելու նպատակով:

Համաձայն ԼՂՀ սահմանադրության 62-րդ հոդվածի՝ ԼՂՀ նախագահ կարող է ընտրվել վերջին 10 տարում ԼՂՀ քաղաքացի հանդիսացող, վերջին 10 տարում ԼՂՀ-ում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ում 35 տարին լրանում է առնվազն ընտրությունների օրը:

ԿԸՀ-ն ԼՂՀ նախագահի ընտրության նախնական արդյունքները կամփոփի, արձանագրությամբ կվավերացնի ու հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես կհրապարակի մինչեւ հուլիսի 20-ի ժամը 20:00-ն:

Արցախ են ժամանել մեծ թվով դիտորդներ, ովքեր ընտրություններից հետո զեկույցներ կհրապարակեն ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Նախագահական ընտրությունները լուրջ ստուգատես են եւ կարեւոր ազդակ, հերթական անգամ միջազգային հանրությանն ու մեր հարեւաններին ապացուցելու, որ ԼՂՀ-ն քայլ առաջ է կատարել ժողովրդավարության հարցում, եւ այս երկրում, դեմոկրատիան առավել բարձր մակարդակի վրա է, քան միջազգային ամբիոններում ագրեսորի կերպարով ներկայացող Ադրբեջանում:

Արցախում առաջիկա ընտրություններից առաջ վերջին սոցհարցումն է անցկացրել սոցիոլոգ **Ահարոն Ադիբեկյանը**: Եթե նախորդ ընտրություններին Բակո Սահակյանը հավաքել էր 85 տոկոս ձայն, ապա, ըստ Ադիբեկյանի, այս անգամ նա ընտրություններում կրկին կհաղթի առաջին փուլից, սակայն կհավաքի 75 տոկոս: Հետաքրքրական է, որ սոցիոլոգը մեկ ամիս առաջ նմանատիպ հարցում էր անցկացրել Արցախում եւ պարզել, որ ներկա նախագահին ձայն կտա ընտրողների 30 տոկոսը: Ադիբեկյանի ներկայացմամբ՝ պաշտոնավարման 5 տարվա ընթացքում Սահակյանը պայքարել է կաշառակերության դեմ: Շատ մարդիկ են տուժել, զրկվել աշխատանքից, հետեւաբար այդ զանգվածը նրան չի ընտրի:

Թեպետ Արցախի նախագահական ընտրություններում առաջադրվել է 3 թեկնածու, սակայն հիմնական պայքարն ընթանալու է ներկա նախագահի եւ ԼՂՀ ԱԺ պատգամավոր Վիտալի Բալասանյանի միջեւ: Ադիբեկյանի գնահատմամբ՝ Բալասանյանը շատ քիչ ձայն կհավաքի, քանի որ արմատական ընդդիմության կեցվածք է ընդունել: Սոցիոլոգի գնահատմամբ՝ Բալասանյանը գնում է այն նույն սցենարով, որը անհաջող իրագործում է Հայաստանի ընդդիմությունը: «Բալասանյանի հայտարարությունները չեն հիմնավորվում ոչ մի փաստով ու թվերով: Նա հայտարարում է, թե այնպես կանի, որ Ղարաբաղը դառնա ԼՂ խնդրի կարգավորման բանակցող կողմ, սակայն չի նշում, թե ինչ ճանապարհով պետք է դա անի»:

Ադիբեկյանի գնահատմամբ՝ աղքատությունն Արցախում 2-3 անգամ պակաս է, քան Հայաստանում: Չկան մուրացիկ մարդիկ, եւ այդ իմաստով դժվար է սոցիալական դժգոհության ալիք բարձրացնել: Սոցիոլոգը վստահ է, որ Բալասանյանն իր հույսը դրել է պասիվ ընտրողների վրա: Դրանց մեծ մասը տնային տնտեսուհիներն են, երիտասարդության մի զանգվածն ու հողագործությամբ զբաղվող գյուղացին: Սոցիոլոգի կանխատեսումներով՝ ընտրություններին կմասնակցի ընտրողների 75 տոկոսը: Սոցիոլոգի մեկնաբանությամբ՝ արցախցիների 69.3 տոկոսն ակնկալում է, որ նորընտիր նախագահը կզբաղվի սոցիալ-տնտեսական հարցերով, աշխատատեղեր կստեղծի, թոշակ, աշխատավարձ եւ նպաստ կբարձրացնի: 20 տոկոսին անհանգստացնում է ենթակառուցվածքների եւ բնակարանների կառուցման խնդիրը, 5.8 տոկոսին հուզում է ԼՂՀ հարցի լուծումը, իսկ 4 տոկոսը կրթական եւ առողջապահական ծրագրեր է առաջ քաշում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Գաղափարաբանություն

# Ռամկավարական գաղափարականը

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

***Ռամկավար Ազատական կուսակցությունը համեմատաբար տեսական քիչ գրականություն է ստեղծել իր գաղափարախոսության շուրջ: Այդ քչերից է սփյուռքահայ նշանավոր գրող, հրապարակագիր, խմբագիր, ՌԱԿ Կենտրոնական վարչության երկարամյա անդամ Անդրանիկ Անդրեասյանի «Մեր գաղափարն ու գործը» գրքույկը, որը կազմված է Կալիֆոռնիայում իր խմբագրած «Նոր Օր» պաշտոնաթերթում հրատարակված խմբագրականներից: Որոշ կրճատումներով հրատարակում ենք հատվածներ 1952 թ.-ին տպված հիշյալ գրքից:***

Քաղաքական, ընկերային ու տնտեսական ռամկավարութեան (*) սկզբունքները, որոնք կը կազմէին ծրագիրը 1908-ին հիմնուած Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան՝ աւելի ընդլայնուած ու խորացուած՝ որդեգրուեցան Ռամկավար Ազատական Կուսակցութեան կողմէ, իբրեւ ուղեցոյց ու դաւանանք: Հակառակ մեր գաղափարական հակառակորդներու անբարեխիղճ խեղաթիւրումներուն ու անոպայ ուրացումներուն, թէ Ռ.Ա.Կ.ը «անսկզբունք» ու «անծրագիր» հոսանք մըն է, մեր կազմակերպութիւնը հանդիսացաւ, ու կը մնա՛յ, առաջին ու միակ ռամկավարական կուսակցութիւնը հայ ազգային կեանքին մէջ: Եւ միայն կոյր այլամերժութիւնն ու քարացած տգիտութիւնը կրնան յանկերգել՝ թէ Ռամկավարութիւնը, ձերբազատ դրամագլուխի քայքայիչ կապանքներէն ու նուիրուած ժողովուրդներու ազատութեան, տնտեսական ապահովութեան ու երջանկութեան, չունի սկզբունք ու գաղափարական: Ինչպէս միայն անմիտ աղանդամոլ մը կրնար հռչակել, թէ Քրիստոնէութիւնը զո՛ւրկ է կրօնքի մը էական յատկանիշներէն:

Բացարձակ, անժխտելի ճշմարտութիւնը կը մնայ, թէ Ռամկավարութիւնը, իր անեղծ ու անխարդախ նկարագրով՝ ամենէն ազնիւ ու կատարեալ կառավարական դրութիւնը կը հանդիսանայ, մարդկային ընկերութեան առաւելագոյն ազատութիւն ու բարօրութիւն ապահովելու հնարաւորութեամբ: Անիկա կը հայթայթէ գաղափարական ամենէն պայծառ ճանապարհը, ուրկէ ազգեր, նուազագոյն աղէտներով ու անկումներով՝ դէպի բարգաւաճում ու յառաջդիմութիւն կրնան մագլցիլ, եւ ուրկէ, բանաւոր մարդ էակը, իր նիւթական կարիքներուն, իր իմացական ձգտումներուն, իր ոգեկան տենչերուն լիացումը կրնայ հետապնդել: Որ Ռամկավարութիւնը աշխարհի ամենէն հզօր, տարերային ու գաղափարականն է՝ անվիճելի իրողութիւն է, նոյնիսկ անոր ոխերիմ թշնամիներէն ընդունուած: Երէկուան արիւնոտ բռնակալներն ու արքայական շուայտ իշխանաւորները, որոնք իրենց ժողովուրդներու տկարութեան, կեղեքուող թշուառութեան ու անսահման տառապանքին վրայ կը յաւերժացնէին իրենց մականն ու պականութիւնը՝ այսօր Ռամկավարութեան ախոյեաններ են դարձեր եւ անոր ծիրանիով կը փորձեն քօղարկել իրենց բռնապետութեանց չարագործ էութիւնը:

Սակայն միայն անուղղայ բռնաւորներուն ու տիտղոսաւոր յելուզակներուն ապաստանիլը չէ Ռամկավարութեան դիմակին ետեւ, որ անոր ուժին ու հմայքին գերազանցութիւնը կ’ապացուցանէ: Կայ տակաւին ցաւագին իրողութիւնը բովանդակ մարդկութեան երկու վիթխարի, հակամարտ բանակներու բաժանումին: Ժողովուրդներ ճեղքուած, վերածուած են համաշխարհային թշնամի ահարկու ճակատներու, որոնք կը պայքարին բուռն մրցակցութեամբ, կը բախին իրարու տնտեսական ու քաղաքական անարիւն ճակատամարտներով, կամ կը զարնուին զինական պոռթկումներով: Մահացու թշնամութեան ու բնաջնջիչ պատերազմի խելագար ջատագովներ կան, որոնք կը պատգամեն. թէ այդ երկու դրութիւնները միաժամանակ չեն կրնար գոյութիւն ունենալ նոյն աշխարհին մէջ, եւ որպէսզի վերապրի մէկը՝ անհրաժեշտ է, որ անմիջապէս ոչնչացնէ միւսը: Բայց բոլոր այդ քրէական մարտակոչերուն, բոլոր փոխադարձ ամբաստանութիւններուն ու անհաշտ բանակռիւներուն մէջ կարելի չէ թաղել այն բացայայտ ճշմարտութիւնը, թէ երկո՛ւ կողմերն ալ իրենք զիրենք հաւատարիմ ախոյեաններ կը յայտարարեն ռամկավարութեան, մէկ կողմը շեշտելով գերակշիռ նշանակութիւնը քաղաքային ազատութեանց, միւս կողմը՝ տնտեսական ապահովութեան:

Ի՛նչ այլազան մեկնաբանութեանց ալ ենթարկուին երկու կողմերու հաւաստումները՝ անոնք մէկ հիմնական իրողութիւն կը հաստատեն,- անվիճելի գերազանցութիւնը ռամկավարական գաղափարականին, իբրեւ սկզբունքային ուղեցոյց ու ճամբայ՝ ժողովուրդներու բոլոր խաւերուն համար իրագործելու քաղաքային լայնագոյն ազատութիւններ, ընկերային անբռնաբարելի արդարութիւն ու տնտեսական հաւասար ապահովութիւն: Եւ այս երեք պահանջներուն բաւարարումը նոյնքան կենսական է մարդ արարածին բարօրութիւնն ու երջանկութիւնը երաշխաւորելու համար:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը առաջին հայ քաղաքական կազմակերպութիւնը հանդիսացաւ մեր ազգային իրականութեան մէջ, որ որդեգրեց ռամկավարական գաղափարականը իր բարձրագոյն, իր ամբողջական էութեամբը եւ զայն քարոզեց, զայն կիրարկեց ու ամրացուց հայ ժողովուրդի ըմբռնողութեան եւ առօրեայ կազմակերպական գործունէութեան մէջ: Դիւրին է, հարկաւ, հռետորային զգացական արտայայտութիւններով ներբողել հայոց «ժողովրդավարական» աւանդութիւնները, որոնք անհիմն ու վարկածային են առնուազն: Հայ թագաւորները, իշխանները ու աւատապետները այնքան բացարձակ էին իրենց ինքնակալութեան մէջ, որքան ուրիշ ազգերու արքաները ու նախարարները: Եւ նախորդ սերունդի յիշողութեան մէջ դառնօրէն թարմ է պատկերը արիւնալի կռիւներուն՝ որոնցմով յաճախ կը խափանուէին ազգային ու կուսակցական ժողովները եւ կը խեղդուէին տարակարծիք ձայները քանի մը տասնամեակ առաջ:

Ճիշտ է, թրքահայոց Սահմանադրութիւնը որոշ իրաւունքներ երաշխաւորեր էր քուէատուներու համար, եկեղեցական ու վարչական գործունէութեան յղացումին ու առաջնորդութեան մէջ: Սակայն մենատիրութեան ու փառքի մոլուցքէն բռնուած կուսակցութիւն մը, ապերասան օրինազանցութեամբ, ոտնահարեց ամէն իրաւունք ու օրէնք: Եւ տասնամեակներով՝ հայ ազգային, եկեղեցական ու կազմակերպական կեանքին մէջ սանձարձակօրէն տիրապետեցին բռնութիւնը, խարազանը, դաշոյնն ու հրազէնը, իբրեւ միջոցներ գաղափարական պայքարի: Տեսակէտներու ազատ բախումին, համոզումներու անկաշկանդ արտայայտումին ու մեծամասնութեան կամքի տիրապետութեան փոխարէն՝ կ’իշխէին հատուածական մոլեռանդութիւնն ու մենակալութեան այլամերժ կի՛րքը, խափանումի, ահաբեկչութեան ու ոճիրի զէնքերով:

Եւ Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը, այդ բիրտ, վայրի ու արիւնալի կերպերուն հակադրեց ռամկավարական սկզբունքներու խաղաղ, բարեբար ու ազնուացնող զօրութիւնը: Այդ գաղափարականին վճռական դերը գաղութահայ ազգային կեանքին մէջ ու արտաքին ճակատին վրայ՝ անժխտելի վկայութիւնը կուտայ զայն որդեգրողներու քաղաքական իմաստութեան ու բարոյական աննուաճելի կորովին:

Ներկայ օրերուն՝ սփիւռքի բոլոր հայ կազմակերպութիւններն ու միութիւնները,- քաղաքական թէ ընկերային, եկեղեցական թէ բարեսիրական, մշակութային թէ հայրենակցական, իւրացուցեր են ռամկավարական սկզբունքներն ու վարչակերպերը իրենց հանրային գործունէութեան ու ներքին կանոնագրութեանց մէջ: Տեղական պարզ անդամական ժողովներէն մինչեւ ընդհանուր համագումարները՝ հիմա՛ կը լսեն անհատին ազատօրէն արտայայտած կարծիքները, կ’ունկնդրեն գաղափարներու անկաշկանդ բախումին, կը վկայեն տարբեր, հակոտնեայ համոզումներու բաղդատութենէն առաջ եկած լաւագոյն տեսակէտներու բիւրեղացումին: Եւ շարքային անդամը, միջին քաղաքացին իր քուէով կ’ընտրէ ու կը վճռէ ո՛չ միայն հետապնդուելիք նպատակը՝ այլ նաեւ զայն իրագործելու ուղին ու միջոցները:

Ամէնքը կ’ընդունին հիմա, թէ ամենէն քաղաքակիրթ ու ազնիւ դրութիւնն է ասիկա, որ իրենց կարծիքներուն արտայայտութեան բացարձակ ազատութիւնը կ’ապահովէ: Անոնք հպարտ ու յանդուգն ինքնավստահութեամբ կը հռչակեն իրենց այդ անբռնաբարելի իրաւունքները եւ յաճախ ինքնաբաւ մարտակոչեր կ’ուղղեն որեւէ մէկուն, որ կը փորձէ՜ զանոնք խլել իրենցմէ: Գաղափարի, դաւանանքի ու խօսքի ազատութեան ըմբռնումին այդ ընդհանրացումն ու խորացումը մեր գաղութահայ զանգուածներուն ու հասարակական գործիչներուն մէջ՝ ճշմարտապէս հզօրագոյն ազդակներէն մէկը հանդիսացաւ արտասահմանի կազմակերպական կենսունակութեան, ազգային նկարագրի պահպանումին, հայրենասիրական շարժումներու արդիւնաւորման ու մշակութային զարգացման: Բայց կը մոռնան անոնք, թէ այդ անփոխարինելի իրաւունքները իրենց չբաշխուեցան հէքիաթներու բարի ոգիներէն, այլ շահուեցան դառն, յարատեւ, երբեմն արիւնալի պայքարներու շնորհիւ:

Որովհետեւ պատկերը եղերականօրէն մռայլ էր քանի մը տասնամեակ առաջ: Խորհրդաւորութեան գաղտնիքը եւ առաջնորդներու հմայքն ու տիրապետութիւնը՝ քաղաքական, եկեղեցական ու ազգային ուրիշ ասպարէզներու վրայ վճռական մասնակցութենէ զրկեր էին ժողովրդային խաւերը, որոնք կրաւորական հետեւողներ դարձեր էին: Կուսակցութիւններ՝ հրապարակային ժողովներ սարքելու համար, պարտաւոր էին զինեալ պահակախումբեր ունենալ, որ իրենց բեմը, այսինքն՝ խօսքի ազատութիւնը պաշտպանուէր հակառակորդ հոսանքի մը խափանարար յարձակումներուն դէմ: Անկուսակցական գրագէտ մը, կամ հասարակական գործիչ մը, եթէ յանդգնէր հրապարակով քննադատել ազգային արարք մը՝ կը դիմագրաւէր սպառնալիքը յանցագործներու խարազանին, կամ դաշոյնին, կամ հրազէնին: Կամայական բռնութիւնն ու ոճրապարտ ահաբեկչութիւնը որդեգրուած կանոններն ու կերպերն էին մենակալութեան, փառքի ու «փող»-ի տենչէն վարակուած քաղաքական ղեկավարներու:

Եւ Ռամկ. Ազատական Կուսակցութիւնը վճռեց արմատապէս յեղաշրջել այդ ախտաւոր, այլասերիչ ու մահացու գոյավիճակը: Անոր վարիչները կը նախատեսէին իրենց ստանձնած առաքելութեան ահարկու խոչընդոտներն ու դաժան փորձութիւնները: Հաւատարմութիւն ուխտելով իրենց կուսակցութեան ընդհանուր ծրագրին՝ անոնք կ’ընդունէին ռամկավարական սկզբունքները իբրեւ վարուելակերպի ու գործունէութեան ուղեցոյց ու դաւանանք: Եւ հակառակորդներու ստորին զրպարտութեանց, ստահակային խռովարարութեանց, ժողովավարական յելուզակային բրտութեան ու եղբայրասպան դաւադիր ոճիրներուն՝ Ռամկավար Ազատականներ հակադրեցին իրենց գաղափարին անընկճելի զօրութիւնը, ճշմարտութեան պայծառ լոյսը, հայրենասիրութեան անշիջելի բոցը:

Որոշած էին չդիմել «ակն ընդ ական»-ի վայրենաբարոյ օրէնքին: Վճռած էին, որ գաղութահայութիւնը չվերածուի քաղաքային ահաբեկչութեանց մրցադաշտի մը, խռովարար անիշխանութեան արշաւանի մը. որովհետեւ այդպիսի ողբերգական կացութիւն մը չքմեղանք պիտի հայթայթէր հիւրընկալ երկիրներու իշխանութեանց՝ ազդուօրէն միջամտելու գաղութահայ համայնքային կեանքին ու գործունէութեան մէջ. եւ պիտի քայքայուէր, խորտակուէր արտասահմանի հայութեան դերն ու նշանակութիւնը, իբրեւ ազգային, քաղաքական ու եկեղեցական գործօն, Հայաստանի ու Հայ ժողովուրդին ներկայ ուռճացման ու ապահովութեան, ինչպէս նաեւ ապագայ զօրացման համար:

Ռամկավար Ազատականներու այս գերազանցօրէն ազգասիրական ու հեռահասօրէն իմաստուն վարքագիծը մեկնաբանուեցաւ չարանենգ խեղաթիւրումով մեր հակառակորդներուն կողմէ,- անոնք, ծիծաղելի, սնամէջ ամբարտաւանութեամբ սկսան յանկերգել, թէ «Ռամկավարները կը վախնա՜ն»: Անհեթեթ ու անմիտ այս վերագրումը քրէական մտայնութիւն մը կը մատնէ՝ որ բանաւոր մարդ էակը կը շփոթէ գիշակեր գազաններու հետ: Գռիհային յոխորտանքով՝ ան կը ճչայ, թէ գաւազանն ու զէնքը կրողը,- այսինքն բռնութեան ու ոճիրի վտանգի գործիքը քա՜ջ մարդ մըն է. իսկ անոր դէմ՝ իր մտքին ու հոգիին ուժերով պայքարողը՝ երկչո՜տ մըն է: Սակայն իրապէս՝ ո՞վ է իսկական հերոսը: Ա՞ն, որ հրազէնի ապաւինած «անվախօրէ՜ն» կ’երթայ առիւծին դէմ. թէ՝ ա՛ն, որ փայտեայ աթոռ մը ձախ ձեռքին եւ աջին մտրակ մը շաչելով՝ գազանը զսպելու կը յանդգնի: Ո՞վ է ճշմարիտ քաջը. ա՞ն է, որ դաշոյն մը յափշտակելով կը վազէ իր համոզումները իբրեւ սխալ մերժող եւ իր գործերը որպէս վնասակար դատապարտող հակառակորդին վրայ. թէ՝ ա՛ն, որ կը խորշի ոճիրէն, իբրեւ մարդկային ստորնագոյն արարքէն՝ եւ բանականութեան լոյսով ու ճշմարտութեան ուժով կը նախընտրէ դիմագրաւել իր ընդդիմադիրը:

Մեր որդեգրած ռամկավարական դաւանանքը ուրիշ հեռահաս նշանակութիւն մը ունեցաւ գաղութահայութեան համար: Այդ գաղափարականը կենսական դեր կատարեց արտասահմանի հայութեան հաւաքական ինքնապահպանումն ու գործունէութիւնը ապահովելուն մէջ:

Այն իրողութիւնը, որ Հայաստան անդամ է Սովետ Միութեան՝ անխուսափելիօրէն բախտորոշ անդրադարձում պիտի ունենար հայկական սփիւռքի գոյավիճակին վրայ: Եւ հայկական հոծ գաղութներ հիւրընկալող երկիրները, ռամկավարական կամ աւատապետական՝ բացայայտ, յաճախ բուռն հակամարտութեան մէջ գտնուեր են Սովետ Միութեան հանդէպ, անոր ծնունդէն մինչեւ ներկայ «ցուրտ պատերազմ»-ի ճգնաժամային օրերը: Բովանդակ մարդկութեան համար ցաւագին, աղէտալի կացութիւն մըն էր ասիկա, որ բացառիկ խստութեամբ կը ճնշէր մասնաւորապէս գաղութահայութիւնը, զայն պարտադրելով դաժան երկընտրանքի մը:

Արտասահմանի հայ զանգուածները կրնային դիւրա՛ւ գործիք դառնալ հիւրընկալ պետութեանց արտաքին քաղաքականութեան եւ հակասովետ, ուրեմն նաեւ հակահայաստանեան խաչակրութեանց զինակից հանդիսանալ, ընկերային ու տնտեսական նշանակելի առաւելութիւններ շահելով: Այս վարքագծին հետեւեցաւ Դաշնակցութիւնը՝ մինչեւ Քէմալական Թուրքիոյ ու Հիթլէրեան Գերմանիոյ հետ ոճրապարտ գործակցութիւն ընդդէմ հարազատ ժողովուրդին ու նորազատ մայր հայրենիքին: Բայց Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը, իր ջերմ հայրենասիրութեան, հայոց ապագային հանդէպ իր անսասան հաւատքին ու իր դաւանած ռամկավարական սկզբունքներուն անխորտակելի ամբարտակը կանգնեցուց ազգուրացութեան ու հայրենադաւութեան այդ մոլեգին յորձանքին դէմ եւ արգիլեց գաղութահայութեան գահավիժումը դաւաճանութեան խորխորատէն վար:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան որդեգրած դեմոկրատիկ ծրագիրը եւ անոր համոզումով փարումը ռամկավարական գաղափարականին՝ ամենէն հզօր ու վճռական ազդակը հանդիսացաւ, որ գաղութահայութիւնը պաշտպանեց ներքին դրուժաններու դաւադիր յարձակումներուն եւ օտար կառավարութեանց քայքայիչ ճնշումներուն դէմ: Դաւանելով ու կիրարկելով դեմոկրատիկ սկզբունքները եւ յարգանք ու հաւատարմութիւն ջատագովելով մեզ հիւրընկալող երկիրներու օրէնքներուն ու բարձրագոյն շահերուն հանդէպ՝ Ռամկ. Ազատականներ կրցան Ռամկապետական իշխանութեանց վստահութիւնն ու համարումը շահիլ հայ փոքրամասնութեանց համար, որով կ’ապահովուէր մեր գաղութներուն ազատ ու բարեբար գործունէութիւնը ազգային, եկեղեցական, բարեսիրական ու մշակութային մարզերուն վրայ:

---

*(*) Մինչեւ 1930-ական թվականները «ռամկավարություն» եզրույթը օգտագործվում էր «դեմոկրատիա»-«ժողովրդավարություն» իմաստով:*
*Խմբ.:*

## Միջազգային

# Սիրիայից մինչեւ Կովկաս. կվերածվե՞ն առանձին օջախները ընդհանուր հրդեհի

***Թարգմանաբար ներկայացնում ենք catu.su կայքում տեղադրված վերլուծաբան Անդրեյ Արեշեւի վերլուծությունը՝ Սիրիա-Թուրքիա-Հարավային Կովկաս եռանկյան համատեքստում:***

Հուլիսի սկզբին ՆԱՏՕ-ի ռազմական նավերի էսկադրան ուղղվեց դեպի Միջերկրականի արեւելք՝ Սիրիային մոտ, տարանցիկ կանգ առնելով Բոսֆորի ափերի մոտ: Պաշտոնապես հայտարարված է, որ արշավի նպատակն է հակազդել «ահաբեկչությանը»: Ընդ որում, ամերիկյան նավերը դեռեւս չեն մասնակցում այդ գործողություններին: Գերմանացի գեներալ Քեհլերն ասել է, որ ՆԱՏՕ-ն չի հանդուրժի, որ ահաբեկչությունը ներթափանցի Միջերկրական ծով: Դա առնվազն կեղծավորություն է. եթե Արեւմուտքը զենքով եւ վարձկաններով չմատակարարեր այդ երկրին, որտեղ այսօր տիրում են անկարգությունն ու ավազակությունը, Բաշար Ասադի կառավարությունը վաղուց արդեն հաղթահարած կլիներ այդ նույն խնդիրը, որի դեմ պայքարի մասին հայտարարել էր նույն Քեհլերը: ՆԱՏՕ-ի նոր ռազմածովային «հակաահաբեկչական առաքելության» իմաստը հետեւյալն է՝ վախ ներշնչել Սիրիային եւ ցուցադրել, որ դաշինքը համերաշխ է Թուրքիայի հետ: Հունիսի 22-ին՝ սիրիական ափերի հակաօդային պաշտպանության «ճեղքերը» փնտրելու ժամանակ թուրքական հետախուզական ինքնաթիռը ոչնչացնելուց հետո, թուրքական իշխանությունների ռազմատենչ հռետորությունը ստացավ «երկրորդ շունչը»: Լուրեր են շրջանառվում, որ Պենտագոնի խորհրդատուների օգնությամբ թուրք-սիրիական սահմանում կտեղակայվեն նորագույն ռադիոլոկացիոն հետեւող համակարգեր, ինչպես նաեւ անօդաչու ինքնաթիռներ:

Սիրիական սահմանին մոտեցվում են ինքնաթիռներ եւ մարտական խմբեր, որոնք կոչված են ցուցադրելու Թուրքիայի վճռականությունը՝ խաղալու իրեն հատկացված դերը այն ներկայացման մեջ, որի արյունոտ վերջաբանը պիտի դառնա ՆԱՏՕ-ի կանոնադրության 5-րդ հոդվածը «հավաքական ինքնապաշտպանության» մասով: Այսօր ամեն մի սադրանք կարող է դառնալ ձեւական պատրվակ Սիրիայի դեմ օդային հարձակումներ սկսելու համար՝ շրջանցելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին: Ըստ CNN-Turk գործակալության տեղեկատվության, թուրքական իշխանությունները պատրաստ են բուֆերային գոտի ստեղծել Սիրիայի հետ սահմանի վրա: Անկարան համապատասխան հարցում է փոխանցել Բրյուսելին վերջերս կայացած ՆԱՏՕ-ի համաժողովի ժամանակ:

Չնայած «սիրիական հարցը» բազմիցս եղել է բարձր մակարդակում ռուս-թուրքական խորհրդակցությունների առարկա, այնուամենայնիվ դիվանագիտական տարաձայնություններն այդ հարցով միայն խորանում են: Լռում է այսպես կոչված Ռազմավարական համագործակցության խորհուրդը, մյուս կառույցները, որ ժամանակին կազմավորվել էին մեծ շուքով, սակայն նրանց ձեւական համակարգողները՝ երկու երկրների ԱԳ նախարարները, հանդես են գալիս հակադիր դիրքերից: Եվ դա զարմանալի չէ: Ըստ բազմաթիվ փորձագետների, ռուս-թուրքական հարաբերությունները, չնայած ապրանքաշրջանառության մեծ ծավալներին եւ մի շարք ոլորտներում համագործակցությանը, թելադրված են տվյալ պահով եւ չունեն «ռազմավարական խորություն»: Հակառակ դրան, Անկարայի եւ Վաշինգտոնի կապերը ռազմավարական բնույթ են կրում: Սա է սկզբունքային տարբերությունը:

Եթե Ռուսաստանի համար Սիրիան նրա անվտանգության «հեռավոր առաջադիրքն» է, ապա Անկարայի արտաքին քաղաքականության մեջ նրա ուղեցույցը մնում է Վաշինգտոնը, չնայած նման մոտեցումը լուրջ քննադատության է արժանանում թուրքական հասարակության մեջ եւ հեռանկարում ընդունակ է կտրուկ սրել Թուրքիայի ներքաղաքական խնդիրները: Քաղաքական պատերազմը Սիրիայում կարող է ստիպել վերհիշել դարավոր պատմական վիրավորանքները եւ հակասությունները, որոնք քայքայում են թուրքական հասարակությունը: Սակայն ազդեցության ոլորտի ընդլայնման ցանկությունը, ախորժակները սիրիական տարածքների եւ ռեսուրսների նկատմամբ, եւ, իհարկե, ԱՄՆ-ի ազդեցությունը դրդում են թուրքական ղեկավարությանը ընդունել էլ ավելի անհաշտելի դիրքորոշում արեւմտյան հարեւանի նկատմամբ:

Իսկ այժմ անդրադառնանք Կովկասին, որտեղ թուրքական դիվանագիտության գործողությունները գրեթե նույնն են: Ինչպես հայտնի է, Կովկասում սիրիական «թշնամու» փոխարեն կա նույնքան պարզ ուրվագծված «բարեկամ», որին աջակցելը «ժողովրդավարական հասարակության» խնդիրն է: Իհարկե, խոսքը Վրաստանի մասին է, որի նկատմամբ հետաքրքրությունը, դատելով այդ երկիր տարբեր մակարդակի գործիչների կատարած այցելությունների դինամիկայից, նկատելիորեն աճել է: Միայն հունիսին այդ երկիր Հիլարի Քլինթոնի այցից հետո այցելել են ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուն, ՆԱՏՕ-ի վերափոխման գծով հրամանատարության հրամանատարի տեղակալ Մեչիսլավ Բինեկը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի մի շարք սենատորներ եւ երկրի նախկին պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը: Հայտարարված է Անդրեաս Ֆոգ Ռասմուսենի կայանալիք այցի մասին:

Թուրքական դիվանագիտության աշխուժացումը «վրացական» ուղղությամբ տեղի է ունենում զուգընթաց Անկարայի կողմից սիրիական հակամարտության հանգույցի ակտիվ թեժացմանը: Վերջին ամիսներին Թուրքիայում կազմակերպված մի շարք միջոցառումները, մասնավորապես նվիրված «չերքեզական հարցին», արժանացել են Ռուսաստանի ԱԳՆ սուր կշտամբանքին:

Համադրելով փաստերը՝ ակնհայտ է դառնում, որ, ըստ ամենայնի, Արեւմուտքում որոշումներ կայացնող կենտրոնների համար «Մեծ Կովկասի» հակամարտային ներուժի «օրգանական» ընդգրկումը «Մեծ Մերձավոր Արեւելքի» աշխարհաքաղաքական հավասարման մեջ դարձել է ռազմավարական պլանավորման աշխատանքային տարրը:

Հունիսի 8-ին Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները ստորագրեցին այսպես կոչված «Տրապիզոնյան հռչակագիրը»: Ենթադրվում է, որ երեք երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հանդիպման ժամանակ քննարկվել են ոչ միայն տնտեսական, այլեւ ռազմաքաղաքական հարցեր: «Տրապիզոնյան հռչակագրի» ստորագրումը հարմարեցվել է ԱՄՆ պետքարտուղար Հ. Քլինթոնի՝ Հարավային Կովկասում գտնվելու հետ:

Վրաստան կատարած այցի ժամանակ զենքի ձեռքբերումից բացի, նա Թբիլիսիին խոստացել էր նաեւ աջակցություն ՀՕՊ-ի համակարգի ամրապնդման եւ ՌՕՈւ-ի վերազինման գործում: Վրացական արտաքին քաղաքական փաստաթղթերի համաձայն՝ Վրաստանի եւ հարեւան Թուրքիայի համագործակցությանը, որը ՆԱՏՕ-ի անդամ երկիր է, մեծ դեր է հատկացվում, ինչը չի կարելի անտեսել:

Համագործակցելով Թբիլիսիի հետ, Անկարան ձգտում է ավելի խոր թափանցել Կովկասի տարածք: Աջարիայում թուրքական ներկայության աճը հարցեր է առաջացնում նույնիսկ վրացական ընդդիմության մեջ, որը մտավախություն ունի, որ ժամանակի ընթացքում թուրքերը Աջարիան կվերածեն երկրորդ «Հյուսիսային Կիպրոսի» կամ էլ «երկրորդ Կոսովոյի»: Վրացական հասարակության տեսադաշտում են նաեւ այլ հարցեր, օրինակ, մահմեդական կրոնի ընդլայնման հետ կապված, ինչն ուղղափառ Վրաստանում ավանդաբար ընկալվում է լարված ուշադրությամբ: Սակայն ընթացող քաղաքական հաշվարկները վեր են դասվում և՛ պատմական հիշողությունից, և՛ կրոնական զգացմունքներից: Այնպես որ, Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթուղու շինարարությունը՝ հիմնականում Ադրբեջանի միջոցներով, շարունակվում է:

Այս ամենը լուրջ մարտահրավեր է նետում ինչպես վրացական-թուրքական երկաթուղային նախագծի սահմաններից դուրս մնացած Հայաստանի առջեւ, այնպես էլ Ռուսաստանի, որի քաղաքականությունը Կովկասում նոր փորձությունների է ենթարկվում: Կարս-Գյումրի երկաթուղին շարունակում է փակ մնալ, սակայն Երեւանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը թուրքական թերթերից մեկի հետ հարցազրույցում հաստատել է, որ ԱՄՆ-ն հետագայում էլ առաջ է տանելու հայ-ռուսական տնտեսական կապերի զարգացման գաղափարը: Նրա կարծիքով, երկաթուղային կապը կարող է վերսկսվել նույնիսկ առանց սահմանը լրիվ բացելու, ինչը մեծ խթան կդառնա առեւտրի եւ զբոսաշրջության բնագավառում: Ըստ ամենայնի, Վաշինգտոնը նպատակ ունի դրանով չեզոքացնել Բաքվի առարկությունները, ըստ որի նա պահանջում է հայ-թուրքական հարաբերությունների որեւէ ջերմացում սերտ կապակցել ԼՂ հակամարտության կարգավորման հետ, ի դեպ՝ բացառապես Ադրբեջանի պահանջներից ելնելով:

Պարզ չէ՝ ինչպես դա կստացվի առեւտրի եւ զբոսաշրջության առումով, սակայն որոշակի տեսակի բեռների փոխադրման դեպքում պարոն Հեֆերնի առաջարկած տարբերակը շատ կօգնի, հատկապես եթե տապալեն Բաշար Ասադին (որից հետո, ինչպես համոզված են բոլորը, կգա եւ Իրանի հերթը): Ավելի ուշ Երեւանում պարոն Հեֆերնը ավելի մանրամասն անդրադարձավ իր «սիրելի դարձած» թեմային: Նա հիշատակեց բանակցությունները հայ եւ թուրքական ընկերությունների միջեւ երկու երկրները միացնող օպտիկաթելքային (օպտիկամանրաթելային) մալուխի անցկացման շուրջը:

Թուրքական ռազմական բռունցքի ստեղծումը սիրիական սահմանի վրա, Անկարայի բուռն դիվանագիտական ակտիվությունը Կովկասում ուղեկցվում են ոչ պակաս նշանակալի նախաձեռնություններով Կենտրոնական Ասիայում, որտեղ Թուրքիան, նորից հետեւելով Վաշինգտոնին, ավելի համառորեն է ընդգծում իր շահերը: Եվ հարցը, թե կարո՞ղ է անկայունության օջախների բազմացումը Մերձավոր Արեւելք - Կովկաս - Կենտրոնական Ասիա աշխարհաքաղաքական աղեղի վրա հասնել նոր պայթյունավտանգ որակի՝ կլանելով արդեն նաեւ Ռուսաստանի Դաշնության տարածքը, ծառանում է իր ողջ չափով...

Թարգմ.՝ ԶՈՅԱ ՄԵԼԻՔՅԱՆ

# Սիրիայի բանակը հակահարձակման է անցել

*Մինչդեռ ապստամբները խոսում են իրենց հարձակման մասին*

Ապստամբների «Սիրիական ազատ բանակը» հայտարարել է, թե ամբողջ երկրում լայնածավալ հարձակում է սկսել կառավարական զորքերի դիրքերի վրա: Ապստամբները համապատասխան հայտարարություն են տարածել հուլիսի 16-ի երեկոյան:



Փաստաթղթում նշվում է, որ սկսվող հարձակումը նախագահ Բաշար Ասադի վարչակարգի իրականացրած «սպանդի եւ բարբարոսական ոճիրների» պատասխանն է:

Ըստ նոր մարտավարության, ապստամբները պետք է գրոհեն «կառավարական զորքերի բոլոր դիրքերը երկրի քաղաքներում ու գյուղերում»: Նպատակն է գերի վերցնել կամ ոչնչացնել Ասադի կողմնակիցներին:

Սիրիացի ապստամբները թիրախներ են հայտարարել նաեւ լիբանանյան «Հզբոլլահ» շարժման եւ «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի» (Իրան) ջոկատները:

Սակայն երեկ սիրիական SANA գործակալությունը հաղորդեց, որ իրականում հանրապետական գվարդիայի ընտիր ստորաբաժանումները սկսել են հետապնդել ապստամբներին Դամասկոսից դեպի արեւելք, հարավ եւ արեւմուտք: Նախօրեին կատաղի մարտեր էին ծավալվել մայրաքաղաքի աղքատ թաղամասեր Մայդանում եւ Թադամունում: Դրանց բնակիչների մեծ մասը լքել է տները եւ ապաստանել պաղեստինցի փախստականների «Յարմուկ» ճամբարում:

SANA-ն հաղորդում է, որ նախօրեին Դամասկոս թափանցած ահաբեկիչները մեծ կորուստներ են կրել եւ ներկայումս կենտրոնացած են Նահր-Այշայի եւ Բասաթինի շրջաններում: Կառավարական զորքերը շրջապատել են նրանց:

«Ալ Վաթան» անկախ հրատարակությունը նշում է, որ մայրաքաղաքի արվարձաններում «հեղափոխական հենակետեր» ստեղծելու եւ իրադրությունն ապակայունացնելու ընդդիմության փորձը ձախողվել է:

Լիբանանյան Նահարնետ գործակալությունը հաղորդում է, որ Դամասկոսի որոշ թաղամասերում ոստիկանների կողքին հայտնվել են զինվորական պարեկներ, իսկ խաչմերուկներում է տեղադրվել զրահատեխնիկա: Գիշերային ժամերին փոխհրաձգություն է ծավալվում Դամասկոսի արեւմտյան արվարձան Մեզզեում: Անվտանգության ուժերը փակել են մայրաքաղաքի մուտքը Զաբադանի առողջավայրի կողմից: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ երեկ հետմիջօրեին մարտեր էին ծավալվել նաեւ Դամասկոսի կենտրոնի որոշ հրապարակներում ու փողոցներում:

# Մազի լաքը եւ արեւայրուկի քսուքը՝ կանանց շաքարախտի աղբյուր

**Բոստոնի Brigham and Women's Hospital-ի աշխատակիցների անցկացրած հետազոտությունների արդյունքները վկայում են, որ մազի լաք եւ արեւայրուկի քսուք օգտագործող կանայք մյուս կանանցից ավելի շատ են ենթակա շաքարախտով հիվանդանալուն: Այդ մասին գրում է բրիտանական «Դեյլի մեյլ» թերթը:**

**Հետազոտողները պնդում են, որ կապ են հայտնաբերել այդ նյութերում պարունակվող ֆտալատի եւ նյութափոխանակության խանգարման միջեւ:**

**Գիտնականների տվյալներով, այն կանայք, ում օրգանիզմում առկա է ֆտալատի մեծ կուտակում, կրկնակի շատ են հիվանդանում երկրորդ տիպի շաքարախտով, քան նրանք, ովքեր հազվադեպ են օգտագործում հիշյալ երկու միջոցները:**

**Ֆտալատներ կան նաեւ եղունգի լաքի, շամպունների եւ օճառի, պլաստիկե փաթեթների մեջ եւ այլուր:**

**Հետազոտողները վերլուծել են 2001-2008 թթ. լաք եւ քսուք օգտագործած 20-80 տարեկան 2350 ամերիկուհիների տվյալները:**

**Պ. Ք.**

# Մշակույթ

## Վերաբերմունքի բացակայություն տաղանդավոր երիտասարդների նկատմամբ

Երբ երաժիշտները լսում են տասնամյա դաշնակահար **Մարտին Շահբազյանին**, դժվարանում են հավատալ, որ բարդ ակորդները, դժվար ստեղծագործություններն ու անցումները կատարում է 13 տարեկան տղան: Նրա ուսուցչուհին՝ Կոնսերվատորիայի դաշնամուրային բաժնի պրոֆեսոր **Սվետլանա Դադյանը** հավելում է, որ յուրաքանչյուր համերգից կամ մրցույթից հետո նրան են մոտենում եւ հարցնում. «Նա իսկապե՞ս 13 տարեկան է: Այնպես է նվագում, կարծես 16-17 տարեկան լինի: Սա խոսում է այն մասին, որ աշխատասիրությանը զուգահեռ Մարտինը գործի է դնում նաեւ ի վերուստ տրված տաղանդն ու մեծ սերը դեպի երաժշտությունը եւ հասնում հաջողությունների», ասում է նա: Մարտինը խոստովանում է, որ արդեն ութ տարի իր ամենամտերիմ ընկերը դաշնամուրն է: Ռախմանինով, Շոպեն: Սրանք պատանի դաշնակահարի ամենասիրելի կոմպոզիտորներն են, ասում է, օրվա ընթացքում չկա ավելի հաճելի եւ հանգստացնող զբաղմունք, քան այս կոմպոզիտորների ամենասիրելի ստեղծագործությունների կատարումը: Հակառակ երիտասարդ տարիքին, Մարտինը հասցրել է գրանցել լուրջ հաջողություններ: Նրա տաղանդը գնահատել են հանրապետական ու միջազգային բազմաթիվ փառատոներում: Առաջին մրցույթը 2004-ին էր՝ Ռուսաստանում: Հինգ տարեկան հասակում արժանացել է չորրորդ մրցանակի: Մոսկվայում կայացած «Բաց Եվրոպա» միջազգային մրցույթ-փառատոնում զբաղեցրել է երրորդ հորիզոնականը: Առնո Բաբաջանյանի անվան հանրապետական մրցույթում էլ արժանացել է երրորդ մրցանակի:

«Հոյակապ երաժշտականություն, մտածելակերպ, երաժշտական ականջ: Սրանք այն հատկություններն են, որոնք երկարատեւ պարապմունքների ընթացքում են ի հայտ գալիս, բայց Մարտինի մոտ լավ հնչողությունն ու մոտեցումը բնատուր է», ասում է Սվետլաննա Դադյանը՝ հավելելով, որ հենց առաջին վայրկյանից հասկացել է՝ Մարտինը կդառնա լավ դաշնակահար:

Օրական ոչ պակաս քան երկու ժամ դաշնամուրի պարապմունք, այնուհետեւ ֆիլմերի դիտում, լող, ռեժիսուրայի ուսումնասիրում ու սեփական բլոգի թարմացումներ: Սրանք Մարտինի հոբբիներն են: Ասում է՝ լավ դաշնակահարը, պետք է լինի զարգացած, հետաքրքրվող եւ տեղեկացված:

Մարտինի ուսուցչուհին եւ մայրը՝ Աննան նշում են, որ նրա մեդալները ու պատվոգրերն ավելի շատ կլինեին, եթե տղան կարողանար մասնակցել փառատոների, մրցույթների: Հրավերները շատ են, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով դաշնակահարը հազվադեպ է մեկնում մրցույթների:

«Իսկ մրցույթները շատ կարեւոր նշանակություն ունեն հասկապես պատանի դաշնակահարի կյանքում: Նա պետք է տեսնի, զգա, հասկանա, սովորի եւ նոր լիցքեր ստանա, որպեսզի կարողանա ազատ արտահայտել իր ներաշխարհը: Մենք ունենք տաղանդավոր երեխաներ եւ նրանք շատ առաջ կգնան, եթե կարողանանք աջակցել: Ոչ թե մեր երեխան գնա արտասահման, այնտեղ նրան գնահատեն, ասեն՝ տաղանդավոր պատանի է եւ միայն դրանից հետո իր երկրում նրա արժեքը գնահատեն, այլ այստեղից գնահատված մեկնի», ասում է Սվետլանա Դադյանը՝ հավելելով, որ այսօր արդյունքի են հասնում, այն պատանիները, որոնց ծնողները հարուստ են: Մինչդեռ կան հազարավոր երիտասարդներ, ովքեր ոչ պակաս տաղանդավոր ու խելացի են, սակայն ունեն ֆինանսական խնդիրներ եւ այդ պատճառով հաճախ նրանք ճանապարհի կեսից հիասթափվում են:

«Երբ Մարտինը մեկնում էր «Բաց Եվրոպա» մրցույթ-փառատոնին՝ որեւէ մեկը չաջակցեց: Հովանավոր գտնել չհաջողվեց: Ուզում էինք հրաժարվել մասնակցությունից, սակայն մրցույթի կազմակերպիչները լսել էին Մարտինի կատարումներն ու հայտարարեցին, որ իրենց հաշվին կմեկնի: Մարտինը մեկնեց եւ երեք հազար մասնակիցների շարքում ստացավ երրորդ մրցանակը: Մեզ համար ցավալի է, որ այսքան բարեբար ունենալու պարագայում, մեր երեխաներին դրսում են գնահատում, օտարներն են գումար հատկացնում նրանց կայացման համար», ասում է Աննան՝ հույսով, որ կգտնվեն մարդիկ, ովքեր կգնահատեն արվեստն ու մշակույթը եւ կցանկանան, որ Հայաստանը այդ ասպարեզում լինի առաջատար:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ամբողջացավ Սահյան-տաճարի հոյակերտ գմբեթը



Համո Սահյանի մաքրամաքուր, հայրենաբույր աշխարհ միշտ մուտք եմ գործել հոգեպես խաղաղվելու, համբերության լույսով ցողվելու համար: Դա այն աշխարհն է, որը, որքան էլ համարես մաքրագործող ավազան, միեւնույն է, սրբապղծություն է այնտեղ անմաքուր ձեռքերով, լղոզված խղճով եւ ապականված հոգով մուտք գործելը, քանի որ՝ պոետական այդ անձեռակերտ խորանից «մոր ծոցի հոտ» է գալիս, օրորոցի հոտ, մայր հողի հոտ, մաքրության եւ անաղարտության հոտ, Սահյանը կասեր՝ մարդահոտ: Ամեն անգամ այդ մարդահոտն եմ առնում՝ հետեւելով, ականատեսը լինելով Շչորս Դավթյանի անկաշառ սիրո, անմնացորդ նվիրման, հարգանքի եւ մեծարման դրսեւորումներին՝ առ Համո Սահյան բացառիկ մեծությունը: Մարդ, ով վերուստ, նախախնամության հրամայականով եղել է Սահյանի լռության «զրուցակիցն» ու մեկնիչը, մենության ընկերն ու նեցուկը՝ կենդանության օրոք, եւ անմահ հիշատակի խնկարկողն ու գրական վաստակի պահապանը՝ ցայսօր:

Հայ գրականության պատմությունից մեզ հայտնի են գրական որեւէ մեծության եւ այդ մեծության հոգեպես եւ ֆինանսապես օժանդակող մեկենասի մի շարք օրինակներ. Խորենացի եւ Սահակ Բագրատունի, Ագաթանգեղոս եւ Տրդատ արքա, Րաֆֆի եւ Ալ. Թովմայան, Թումանյան եւ Փիլ. Վարդազարյան... Մեր օրերում՝ Սահյան եւ Շչորս Դավթյան: Այդ մեծ «համագործակցություններից» եթե փորձենք ճշտել, թե ով է շահել՝ գրողը, թե՞ մեկենասը, միանշանակ կարող ենք ասել՝ հայ գրականությունը: Վկան՝ մեր պատմագրության կոթողները՝ անցյալում,

եւ բազում գրքերը, ուսումնասիրությունները, «Համո Սահյան» գիտամշակութային կենտրոնը, «Համո Սահյան» ոսկե հուշամեդալը՝ այսօր, Շ. Դավթյանի շնորհիվ:

Եվ այս շարքում, Սահյանի 100-ամյակին ընդառաջ՝ երկերի լիակատար քառահատոր ժողովածուի 1-ին հատորի լույս ընծայումը: Այն օրերս դրվեց ընթերցողի սեղանին, եւ ինչպես ծանուցում է գրքի կազմող եւ խմբագիր Շ. Դավթյանը. «Հատորն ընդգրկում է մեծ բանաստեղծի «Հայաստանը երգերի մեջ» եւ «Մայրամուտից առաջ» ժողովածուները՝ համապատասխան ենթավերնագրերով»: Շնորհավորելով բոլորիս այս առիթով, դրվատանքիս շեշտը մեկ այլ գրքի վրա եմ ուզում դնել. հատորին զուգընթաց հրատարակվել է Շ. Դավթյանի «Համո Սահյան. հանրագիտարան» բառագիրքը, որը ընդգրկում է 261 բառահոդված՝ կազմված այբբենական կարգով, եւ այբուբենի յուրաքանչյուր տառով սկսվող մի գո-



*Համո Սահյանը եւ Էդվարդ Իսաբեկյանը*

հար՝ Սահյանի պոեզիայից: Հեղինակը, բացի շնորհակալ գործից՝ համբերատար, մանրակրկիտ գործ է կատարել հանրագիտարանը կազմելու համար: Եվ, մեկ այլ աննախադեպ աշխատանք. գրքի վերջում, դարձյալ այբբենական կարգով ներկայացված է Համո Սահյանի ստեղծագործությունների ցանկը՝ գիրք առ գիրք: Հանրագիտարանում զետեղված են հայ եւ օտար այն գրողներն ու մշակութային գործիչները, որոնք առնչություն ունեն Սահյան բանաստեղծի հետ թարգմանել են նրա գործերից, խոսք են ասել Սահյանի եւ իր պոեզիայի մասին, նաեւ, որոնց մասին Սահյանն ինքն է հոդված կամ բանաստեղծություն գրել: Ներկայացված են Սահյանի հայերեն ու ռուսերեն տպագրված գրքերը, տոհմածառը, ծնողներն ու ընտանիքը: Գիրքը հագեցած է համապատասխան լուսանկարներով, սահյանական ձեռագիր-մասունքներով: Սա իրավամբ կարելի է համարել Շ. Դավթյանի ձեռամբ մինչեւ այժմ «կառուցած» Սահյան-տաճարի հոյակերտ գմբեթը: Այո, Շչորս Դավթյանը ամբողջացրեց իր գլխավոր ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ կառույցը, իր գրեթե կեսդարյա տքնանքի արգասիքը: Մեզ մնում է միայն շնորհակալ, երախտապարտ լինել կառուցողին:

Կարելի է ասել՝ յուրաքանչյուր ճշմարիտ բանաստեղծ իր թելն է մանում՝ իր տաղանդի գորգը հյուսելու համար: Սահյանն իր գորգը հյուսեց իմաստության, հեռատեսության, խղճի, չափավորության թելերից: Ժամանակն անզոր է գունաթափել կամ մաշել այդ գորգի որեւէ պատառիկ, աղճատել որեւէ նախշ ու պատկեր. նրա գույները բնության պարգեւն են, հետեւաբար՝ նրա պես հավերժ են ու անեղծելի...

Ցավոք, մի «մանրուք» է պետք հաշվի առնել. այսօր ապրում ենք արժեզրկումների եւ մշակույթի անկման խայտառակ ժամանակներում, եւ քանի որ պետությունը այս հարցում անհասկանալի կեցվածք է ընդունել, յուրաքանչյուր ազգային դիմագիծ ունեցող եւ ազգի մշակույթ ներկայացնող մեծության կողքին մի նվիրյալ է պետք՝ մոռացության, անտեսման փոշին «մաքրելու» համար: Շչորս Դավթյանը երբեք թույլ չտվեց, որ Սահյանի մահից հետո փոշու գեթ մի հյուլե նստի նրա անվան, պոեզիայի, գործի կամ հիշատակի վրա:

Համո Սահյան եւ Շչորս Դավթյան. միածույլ անուններ, միացած հրար քարակուռ, բնական կամուրջով: Սերունդներ կքայլեն նրա վրայով: Թող ներվի ինձ այս միտքը, սակայն Սահյանը եւ Շ. Դավթյանը փոխադարձաբար միմյանց ձեռքերի վրա լցրեցին անմահության ջուրը. Սահյանն իր բարեկամությունը, վստահությունը, սերը տալով Դավթյանին, վերջինս՝ իր տքնանքը, ջանքը, նվիրումը ի սպաս դնելով Սահյանի անվան, պոեզիայի, հիշատակի անկորնչելի, պաշտելի մնալուն:

Այս փաստը կյանքն ու ժամանակը վաղուց են վավերագրել...

ԳԱՅԱՆԵ ԱԹԱՆՅԱՆ

## Շնորհանդես

Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախաձեռնությամբ օրերս հրատարակվեցին «Թեքեյան մրցանակակիրներ» եւ Վահան Թեքեյանի բանաստեղծությունների «Հատընտիր» գրքերը:

«Թեքեյանի մրցանակակիրներ» տարեգիրքը կարծես Թեքեյան մշակութային միության ծավալած հասարակական, մշակութային գործունեության յուրահատուկ ամփոփումն է ու նաեւ դրա վկայությունը: Թեքեյան մրցանակի արժանացած ավելի քան 100 ճանաչված արվեստագետների, հասարակական, պետական գործիչների կենսագրություններ ու լուսանկարներ է ամփոփում այս հոբելյանական տարեգիրքը: Գրքի առաջաբանում ՀԹՄՄ նախագահ, ՀՊՄՀ-ի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը** արդարացիորեն փաստում է 1993-ից 2010 թվականներին Հայաստանի գրական, հասարակական եւ մշակութային կյանքում միության ձեռք բերած նշանակության մասին:

Ի լրումն այս ամենի՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միության շնորհիվ եւ Գ. Գյուլբենկյան հիմնարկության մեկենասությամբ հայ ընթերցողի սեղանին դրվեց նաեւ Վահան Թեքեյանի բանաստեղծությունների նորընծա «Հատընտիր»-ը: Գրքի կազմողը, խմբագիրն ու առաջաբանի հեղինակը անվանի գրականագետ Երվանդ Ազատյանն է: «Հատընտիր»-ը հայ ընթերցողին է ներկայանում գեղեցիկ կազմով եւ Վահան Թեքեյանի լավագույն բանաստեղծությունների ընտրությամբ՝ բաժանված իմաստային 5 գլուխների, որոնցով առավել սիրելի ու ճանաչելի է դառնում անվանի բանաստեղծը: Այն գրական գեղարվեստական եւ հրատարակչական առումով յուրատեսակ նվեր է արեւմտահայ վերջին դասականի անմար հիշատակին: Շնորհանդեսի ընթացքում ելույթ կունենա ֆրանսահայ դերասան, բեմադրիչ Ժիրայր Փափազյանը՝ Վ. Թեքեյանի մի շարք գործերի մասնակցությամբ:

*Հայաստանի Թեքեյան մշակութային միություն*

## Հուշ-ցերեկույթ՝ Այվազովսկի եղբայրներին

Հուլիսի 18-ին, ժամը 14-ին Ազգային պատկերասրահի Այվազովսկու դահլիճում կկայանա հուշ-ցերեկույթ, նվիրված խոշորագույն ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու 195 եւ եղբոր՝ Գաբրիել արքեպիսկոպոսի ծննդյան 200-ամյակներին: Օրվա բանախոսն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Շահեն Խաչատրյանը: Ձեռնարկի ընթացքում կցուցադրվեն նկարչի անհայտ գործեր:

Ս. Ս.

## «Արցախի երեք վանքերը» գրքի շնորհահանդէս Ս. Թադէի վանքում

Ս. Թադէի վանքի եռօրեայ ուխտագնացութեան շրջագծում, հովանաւորութեամբ Ատրպատականի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթճեանի, տեղի ունեցաւ Արմէն Հախնազարեանի աշխատասիրած «Արցախի Երեք Վանքերը» նորատիպ հատորի շնորհահանդէսը: Հանդիսութեանը ներկայ էին Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսեանը, Հայաստանից եւ Իտալիայից ժամանած՝ վանքերի վերանորոգութեան մասնագէտներ:

Գիրքը բաղկացած է 368 էջերից, բազմաթիւ լուսանկարներով: Գրքի ուսումնասիրութեան նիւթը Իրանի Ատրպատական նահանգում (որը համընկնում է պատմական Արցախ գաւառին) գտնուող հայկական երեք՝ Ս. Թադէոս Առաքեալի, Ս. Ստեփանոս Նախավկայի եւ Ծործորի վանքերն են: Հրատարկուել է Երեւանում՝ Հայկական Ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի (RAA) գիտական խորհրդի կողմից, ՀՀ Մշակոյթի նախարարութեան հովանաւորութեամբ եւ Գա-




լուստ Գիւլբենկեան հիմնարկութեան մեկենասութեամբ:

UNESCO-ի կողմից տրամադրուած գնահատականներ տուեցին գրքի հեղինակ՝ հանգուցեալ ճարտարապետ Արմէն Հախնազարեանին, որ յանձնեց Հայաստանեան գրասենեակի պատասխանատուին ինչպէս նաեւ ճարտարապետ պրն. Վարուժան Առաքելեանին:

Ատրպատականի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդը, յարգելով յիշատակը Արմէն Հախնազարեանի յիշեց, թէ «1960-ական թուականներից սկսած, ինչքան նեղութիւններով նա այցելեր էր այս վանքերը, լուսանկարել ու չափագրել էր դրանք, եւ ապա ուսումնասիրել դրանց մանրամասն պատմութիւնը»: Հայր սուրբը նաեւ երախտագիտութեամբ յիշեց պրն. Վարուժան Առաքելեանին, որ նոյնքան նուիրումով ու նախանձախնդրութեամբ ամէնօրեայ տագնապի է վերածել իր մէջ վանքերի առողջ պահպանման հրամայականը: Ապա, նա շնորհակալութիւն յայտնեց UNESCO-ին, նրա ներկայացուցիչների ճամբով, գնահատելով այն շարունակող հոգածութիւնը, որ ցուցաբերում է հանդէպ Ատրպատականի Հայոց թեմի վանքերին:

Շնորհահանդէսի աւարտին կատարուեց նաեւ գրքի գինեձօնը, դրա առաջին օրինակը գինով մկրտելով:

ԱԼԵՔՍ ՔՈՉԱՐՅԱՆ

# Մարզական

## «Ուլիսն» էլ չգտավ «Շերիֆի» դարպասի բանալին

Եվրոպական գավաթների մրցաշարերում հայկական ակումբները երրորդ անգամ մրցեցին Մոլդովայի բազմակի չեմպիոն «Շերիֆի» հետ: Ինչպես նախորդ մրցախաղերում «Արաքսին» ու «Փյունիկին» չէր հաջողվել գրավել «Շերիֆի» դարպասը, այս անգամ էլ մրցակցի դարպասի բանալին չգտավ «Ուլիսը»: Չեմպիոնների լիգայի որակավորման երկրորդ փուլի առաջին խաղում Հայաստանի չեմպիոնը 0-1 հաշվով պարտություն կրեց «Շերիֆից» եւ խիստ հարցականի տակ դրեց հաջորդ փուլ դուրս գալու իր հնարավորությունը:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Ուլիսի» ֆուտբոլիստները բավական ակտիվ սկսեցին հանդիպումը եւ արդեն խաղասկզբում կարող էին հասնել հաջողության, սակայն խառը իրադրությունում Պատոն չկարողացավ մոտ տարածությունից գրավել դարպասը: Հյուրերը ընտրել էին հակագրոհների մարտավարություն եւ բավական սուր գրոհներ էին կազմակերպում: Դրանցից մեկի ժամանակ՝ օգտվելով «Ուլիսի» պաշտպանի կոպիտ սխալից, Դարվին Ռիոսը մենմենակ դուրս եկավ դարպասապահի դիմաց, եւ գնդակը նրա գլխավերեւով ուղարկեց դարպասը: Բարեբախտաբար, գնդակը դիպավ դարպասաձողին: «Շերիֆի» ֆուտբոլիստներն առաջին խաղակեսում եւս մի քանի հակագրոհներ կազմակերպեցին՝ դրանք ավարտելով դարպասին կատարված վտանգավոր հարվածներով: Լավ էր, որ դրանք մի փոքր շեղ էին:

Ինչ վերաբերում է «Ուլիսի» ֆուտբոլիստներին, ապա նրանք հաջողությանը մոտ էին 41-րդ րոպեին, երբ ձախից ներխուժելով տուգանային հրապարակ, Շոթա Ջիքիան հարվածեց դարպասին, սակայն գնդակի ճանապարհը փակեց դարպասապահը:

Թվում էր, թե ընդմիջումից հետո ուլիսցիները ավելի ակտիվ ու մեծ ուժերով կգրոհեին ու վերջապես կգրավեին մրցակցի դարպասը: Ցավոք դա տեղի չունեցավ: Փոխարենը հյուրերը 60-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո հասան արդյունքի: Սերգեյ Գեորգիեւը շեշտակի հարվածով գնդակն ուղարկեց դարպասի վերին անկյունը: Այդ գոլը փաստորեն վճռեց հանդիպման ելքը, քանի որ մնացած ժամանակահատվածում ուլիսցիներն այդպես էլ չկարողացան լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Իսկ «Շերիֆը» բավարարվելով ձեռք բերածով, խաղը տեղափոխեց հանգիստ հուն եւ առանց մեծ ճիգեր գործադրելու պահպանեց հաղթական հաշիվը:

Վաղը Եվրոպայի լիգայի որակավորման երկրորդ փուլի հանդիպումները կանցկացնեն «Շիրակն» ու «Գանձասարը»: Գյումրեցիները կհյուրընկալվեն Իսրայելի «Բնեյ Եհուդային», իսկ կապանցիները Ժնեւում կմրցեն շվեյցարական «Սերվետի» հետ:

## Ավելանժն ու Տեյշեյրան մեղադրվում են կոռուպցիայի մեջ

Շվեյցարական դատարանը պաշտոնապես հրապարակել է այն փաստաթղթերը, որոնք ապացուցում են, որ ՖԻՖԱ-ի նախկին նախագահ Ժոաո Ավելանժը եւ ՖԻՖԱ-ի գործկոմի նախկին անդամ Ռիկարդո Տեյշեյրան խոշոր չափի կաշառք են ստացել ISL մարկետինգային ընկերությունից, որը զբաղվում է աշխարհի առաջնությունների խաղերի հեռարձակման իրավունքի վաճառքով:

Այդ ընկերությունը դեռեւս 1990-ականներին ՖԻՖԱ-ի չինովնիկներին կաշառելու միջոցով ստացել էր աշխարհի առաջնությունների խաղերի հեռարձակման իրավունքը: Ըստ փաստաթղթերի, Ավելանժը 1997-ի մարտին ընկերությունից ավելի քան 1,5 մլն դոլար կաշառք է ստացել: Իսկ Տեյշեյրան 1992-1997-ի ընթացքում ընդհանուր առմամբ 12,7 մլն շվեյցարական ֆրանկ է ստացել: Հետաքրքրականն այն է, որ ISL ընկերությունը 2001-ին սնանկացման հետեւանքով դադարեցրել է գործունեությունը:

Միայն 2010-ի մայիսին լրատվամիջոցների ճնշման տակ քննչական օրգանները սկսեցին այդ գործով հետաքննությունը: 2010-ի նոյեմբերին բրիտանական BBC հեռուստաալիքով ցուցադրված հաղորդման մեջ Ավելանժը մեղադրվում էր ISL-ից ստացած մեծ չափերով կաշառքի մեջ: Նաեւ նշվել էր, որ ՖԻՖԱ-ի չինովնիկները դատական գործը կարճելու նպատակով 5,5 մլն շվեյցարական ֆրանկ են վճարել:

96-ամյա Ժոաո Ավելանժի առողջական վիճակը վերջերս կտրուկ վատացել էր ու նա հայտնվել էր հիվանդանոցում: Տեյշեյրան էլ դեռեւս մարտին ազատվել էր ՖԻՖԱ-ի գործկոմի անդամի, իսկ ավելի վաղ՝ նաեւ Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոններից: Հիշեցնենք, որ Ավելանժը 24 տարի՝ 1974-1998-ին գլխավորել է ՖԻՖԱ-ն, որից հետո ընտրվել է ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի պատվավոր նախագահ: Իսկ Տեյշեյրան Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահն էր 1989-ից:

## Ոչ-ոքի մեկնարկում

**Երեկ Ջերմուկում մեկնարկեց շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 5-րդ փուլի մրցաշարը: Բացման արարողությանը ներկա էին հանրապետության նախագահ, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանն ու ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը:**

**Վիճակահանության քմահաճույքով Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը մեկնարկում մրցեցին միմյանց հետ եւ, ինչպես սպասվում էր, մրցավեճն ավարտեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին նաեւ Հոու Յիֆանն ու Բաթխույագ Մունգունտուլը, Ժուան Լուֆեյը եւ Կատերինա Լահնոն: Համպի Կոներուն հաղթեց Զժաո Սյուեին, Ցզյույ Վենցզյունը պարտության մատնեց Նինո Խուրցիձեին, Եկատերինա Կովալեւսկայան էլ առավելության հասավ Նադեժդա Կոսինցեւայի նկատմամբ:**

**Այսօր կայանալիք երկրորդ տուրում Լիլիթ Մկրտչյանը սպիտակներով կխաղա աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանի հետ: Էլինա Դանիելյանը սեւերով կմրցի Ցզյույ Վենցզյունի հետ:**

## Դոպինգի պատճառով Կուսյակը Լոնդոն չի մեկնի

Լեհ գնդահրորդ Դամյան Կուսյակը չի մասնակցի Լոնդոնի ամառային օլիմպիադային, քանի որ նրա դոպինգ ստուգումը դրական արդյունք է տվել: Նրա արյան անալիզում հայտնաբերվել է արգելված խթանիչ՝ ստանոզոլոլ: 24-ամյա մարզիկին երկամյա որակազրկում է սպառնում:



Այս տարի Կուսյակն անձնական ռեկորդ սահմանեց՝ գունդը հրելով 20,45 մետր: Այդ արդյունքով նա երկրի առաջնությունում 2-րդ տեղը գրավեց: Հենց այդ ժամանակ էլ նրան դոպինգ ստուգման ենթարկեցին: Լեհաստանի թեթեւ ատլետիկայի ֆեդերացիան Կուսյակին զրկեց մրցումների մասնակցությունից, ուստի վերջինս ստիպված էր բաց թողնել Հելսինկիում կայացած Եվրոպայի առաջնությունը:

Հասկանալի է, որ Կուսյակը չի պահանջել B նմուշի հետազոտություն կատարել՝ դրանով իսկ ընդունելով իր մեղքը:

Լոնդոնում գնդի հրման մրցումներում Լեհաստանը կներկայացնի երկրի չեմպիոն Թոմաշ Մաեւսկին, որը հաղթել էր 21,07 մետր արդյունքով: Ընթացիկ մրցաշրջանում նա ցույց է տվել 21,6 մետր արդյունք եւ կարող է հավակնել օլիմպիական մեդալի:

### ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## Արթուր Աբրահամը պատրաստվում է Շտիգլիցի հետ մենամարտին

**Միջինքաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամը սկսել է նախապատրաստվել օգոստոսի 25-ին Ռոբերտ Շտիգլիցի հետ կայանալիք մենամարտին: Ինչպես հայտնի է, այդ մենամարտում կվիճարկվի Շտիգլիցին պատկանող 2-րդ միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Մենամարտը կայանալու է Բեռլինում:**



**Արթուր Աբրահամը մարզումներն անցկացնում է Բալթիկ ծովի ափին գտնվող Ցինովից առողջարանային քաղաքում: Արթուրն այստեղ կմնա 4 շաբաթ, որի ընթացքում կփորձի լավ մարզավիճակ ձեռք բերել: Մեծ ուշադրություն է դարձվում ֆիզիկական որակների բարելավմանը: Այդ նպատակով Արթուրը թեթեւատլետիկական տարբեր վարժություններ է կատարում, վազում ու ցատկում է: Նա իր թիմակիցների հետ հաճախ նաեւ ֆուտբոլ է խաղում, լողանում է ծովում: Դե իսկ մարզչի հետ պարապմունքների ժամանակ հղկում են մենամարտելու տեխնիկան, տակտիկական տարբեր մտահղացումներ են փորձում կիրառել: Արթուրն ու իր մարզիչը դիտել են Շտիգլիցի մասնակցությամբ մենամարտերի տեսագրությունները եւ լավ ուսումնասիրել են նրա մարտաոճը: Մարզումների ժամանակ էլ Աբրահամը ստուգողական մենամարտեր է անցկացնում Շտիգլիցի ոճին համապատասխան բռնցքամարտիկների հետ:**

**Շտիգլիցի հետ մենամարտը շատ կարեւոր է Արթուրի համար՝ կրկին նվաճելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: 32-ամյա Արթուրը պրոֆեսիոնալ ռինգում 37 մենամարտ է անցկացրել, որից 34-ում հաղթել է, 3-ում պարտվել է: 31-ամյա Շտիգլիցը 44 մենամարտերից 42-ում է հաղթել, կրել է 2 պարտություն:**

## Սամվել Մելքոնյանը տեղափոխվեց Սոֆիայի «Լոկոմոտիվ»

**Երեւանի «Բանանցի» եւ «Միկայի» նախկին հարձակվող Սամվել Մելքոնյանը ելույթները կշարունակի Բուլղարիայում: Անցած մրցաշրջանում նա հանդես էր գալիս Բուրգասի «Չեռնոմորեցում», որի կազմում 10 խաղ էր անցկացրել: Վաղը նրա պայմանագրի ժամկետն ակումբի հետ կլրանա: Հայ ֆուտբոլիստը որոշել է ելույթները շարունակել բուլղարական մեկ այլ ակումբում՝ Սոֆիայի «Լոկոմոտիվում»:**

## Մայիս Ազիզյանը վերադարձավ «Արարատ»

**Երեւանի «Արարատը» նոր գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանի գլխավորությամբ շարունակում է նախապատրաստվել առաջնության 3-րդ շրջանին: Օրերս Իրանից «Արարատ» է տեղափոխվել փորձառու դարպասապահ Մայիս Ազիզյանը: 34-ամյա Ազիզյանն Իրանում հանդես է գալիս «Աբոմուսլեմում»:**

**Հայաստանի բարձրագույն խմբի առաջնություններում Մայիս Ազիզյանը ֆուտբոլային կարիերան սկսել է հենց «Արարատում»: Նա հանդես է եկել նաեւ «Կիլիկիայում», «Ուլիսում», «Միկայում» եւ «Իմպուլսում», Իրանի մի քանի ակումբներում:**

## Հրաչ Յագանը հեռացավ «Գանձասարից»

**Երկկողմ համաձայնությամբ «Գանձասարը» խզել է Հրաչ Յագանի հետ պայմանագիրը: Հայաստանի երիտասարդական հավաքականի նախկին ֆուտբոլիստն այդպես էլ չկարողացավ ամրապնդվել թիմում: Յագանը կվերադառնա Բելգիա, որտեղ ժամանակին հանդես է եկել «Ստանդարդում» եւ «Տյուբիզում»:**

## Հայաստանի առաջնությունը 79-րդն է աշխարհում

**Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է ազգային առաջնությունների վարկանիշային հերթական ցուցակը, որում Հայաստանի առաջնությունը 79-րդն է աշխարհում: Համեմատության համար նշենք, որ Վրաստանի առաջնությունը 66-րդն է, իսկ Ադրբեջանինը՝ 111-րդը:**

**Աշխարհի ամենաուժեղ ազգային առաջնություն է ճանաչվել իսպանական Լա լիգան: 2-րդ եւ 3-րդ հորիզոնականները զբաղեցնում են Արգենտինայի եւ Բրազիլիայի առաջնությունները: 4-րդ տեղում Անգլիայի պրեմիեր լիգան է, իսկ լավագույն հնգյակը եզրափակում է Իտալիայի A սերիան: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Գերմանիայի, Չիլիի, Պարագվայի, Ֆրանսիայի եւ Հոլանդիայի առաջնությունները:**

## Կապելոն կգլխավորի ՌԴ հավաքականը

**Ֆուտբոլի Ռուսաստանի ազգային հավաքականը կգլխավորի Ֆաբիո Կապելլոն: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի ֆուտբոլային միության նախագահի պաշտոնակատար Նիկիտա Սիմոնյանը: Իտալացի մասնագետի հետ պայմանագիր կկնքվի մոտ օրերս: Նախատեսվում է նրա հետ պայմանագիր կնքել մինչեւ 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության ավարտը: Կապելլոյի տարեկան աշխատավարձը կլինի 6 մլն եվրո:**

**«Կապելլոյի ներկայացրած ծրագիրն ամբողջությամբ համապատասխանում է մեր պահանջներին, ուղղված է Ռուսաստանում ֆուտբոլի համաչափ եւ երկարաժամկետ զարգացմանը: Բացի հավաքականի հանդիպումներում ցանկալի արդյունք ապահովելուց, Կապելլոն պետք է զբաղվի նաեւ ռուսաստանցի ֆուտբոլիստների պատրաստմամբ: Նա պատրաստ է համագործակցել ակումբների մարզիչների հետ, հետեւել նրանց մարզումներին: Կարեւոր հանգամանք է նաեւ, որ Կապելլոն համաձայնվել է բնակվել Ռուսաստանում: Անձամբ ես կարծում եմ, որ չարժե ձգձգել հավաքականի գլխավոր մարզչի ընտրության հարցը», նշել է Նիկիտա Սիմոնյանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հայաստանի Թեքեյան Մշակութային Միություն

# Շնորհանդես

**նվիրված Հայաստանի Թեքեյան մշակութային միության հրատարակած «Վահան Թէքէեան. Հատընտիր» եւ «Թեքեյան մրցանակակիրներ» ծեղ հատորներին**

***Տեղի կունենա այսօր, հուլիսի 18-ին, ժամը 15.00-ին, Թեքեյան կենտրոնի (Խանջյան 50) մեծ դահլիճում:***

## Հողատարածքներ եւ այգիներ Կոտայքի մարզում

Կոտայքի մարզի Հացավան գյուղում վաճառվում են լավ մշակված ծիրանի 2 այգիներ՝ 9.500 և 15.000 քմ, ինչպես նաև դատարկ հողատարածքներ՝ 10000քմ, 15000քմ, 20000 և 30000 քմ՝ առանց միջնորդի, մատչելի գնով, շուկայականից էժան: Բերքը վաճառվում է միասին, ծառերը 5 տարեկան են:

**Հեռ. 099-51-61-83, 055-26-47-83, 077-26-47-83:**

## Հայտարարություն

«ՆԱՐ-ԱՌ» ՍՊԸ-ն տեղեկացնում է, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության պետական տեսչության կողմից իրականացված ստուգման ընթացքում լաբորատոր փորձարկումների արդյունքում պարզվել է, որ Բեբիկո միդի մանկական հիգիենիկ տակդիրները չեն համապատասխանում անվտանգության ցուցանիշների պահանջներին:

Ընկերությունը տեղեկացնում է, որ ս. թ. հուլիսի 16-ից Բեբիկո միդի մանկական հիգիենիկ տակդիրները շրջանառությունից հանվել են:

Մինչ այդ գնված, բայց չօգտագործված տակդիրները կարող եք վերադարձնել հետեւյալ հասցեով՝

ք. Երեւան, Սեւանի 5/1, հեռախոս՝ 44-45-61:

## ՕՐԱԿԱՐԳ

2012թ. հուլիսի 24-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի

▼ «Կլեոպատրա» ՍՊԸ (ԽՏ-031 լիցենզիա) կողմից ներկայացված խաղատան շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի փոփոխությանը համաձայնություն տալու հարցի քննարկում:

«Օպտիմա Լոտո» ՍՊԸ (ՎԽ-022 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգի փոփոխությանը համաձայնություն տալու հարցի քննարկում:

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

## Ի գիտություն բուհերի 2012 թվականի առկա ուսուցման ընդունելության դիմորդների

Այն դիմորդները, ովքեր դրական գնահատականներով հանձնել են մաթեմատիկա, օտար լեզու, հայոց լեզու առարկաները եւ առաջին մրցույթի արդյունքներով չեն ընդունվել բուհ, ըստ կարգով կարող են ներկայանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարան, տնտեսագիտական մասնագիտությունների առկա ուսուցման համակարգում ընդունելության նոր հայտ ներկայացնելու եւ երկրորդ՝ լրացուցիչ մրցույթին մասնակցելու համար:

Իսկ այն դիմորդները, ովքեր միայն մաթեմատիկայից են ստացել դրական գնահատական, կարող են դիմել ագրարային համալսարանի ճարտարագիտական, ագրոկենսաբանական եւ տեխնոլոգիական մասնագիտություններում ընդունվելու համար:

Մանրամասների համար դիմել Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Տերյան 74, առաջին մասնաշենք, ընդունող հանձնաժողով, հեռ. 54-04-96, 52-15-65, 077-32-91-45, 091-53-31-17:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ն հայտարարում է աճուրդ-վաճառք ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառվող ոչ ընթացիկ ակտիվների հետեւյալ անվանացանկով:

Աճուրդ-վաճառքը կկայանա յուրաքանչյուր անվանումն առանձին լոտով 06.08.2012թ-ի ժամը 14.00-ին: Հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Հաղթանակ, «Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ի վարչական շենք: Դիմումները կարող են ներկայացնել մինչեւ 03.08.2012թ.-ի ժամը 14.00-ն: Տեղեկատվությունների համար դիմել հետեւյալ հեռախոսահամարներով.

**099062722, 094994439:**

Էլ. փոստ debed-axstev-jrar@mail.ru

### ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

**«Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ում 06.08.2012 թ. կայանալիք աճուրդում վաճառվելիք հիմնական միջոցների**

| հ/հ | Գույքի անվանումը /մակնիշը/ | Շահագործման տարեթիվը | Քանակը հաշվառմամբ հատ | Երկրորդ աճուրդում նշանակված գինը դրամ | Երրորդ աճուրդում առաջարկվող գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| 1. | Ավտոբուս ԿԱՎԶ-685 | 1986 | 1 | 190000 | |
| 2. | Ա/մեքենա ՄԱԶ-3507 | 1985 | 1 | 240000 | |
| 3. | Ա/մեքենա ԻԺ-2715 | 1988 | 1 | 125000 | |
| 4. | Կցասայլ տրակտորի 2ՊՏՍ-4Մ | 1987 | 1 | 25000 | |
| 5. | Գայլիկոնման հաստոց Մ-118Ա | 1975 | 1 | 30000 | |
| 6. | Հատուկ ԱՑ-3613 | 1990 | 1 | 86000 | |
| 7. | Տրակտոր D-3-162-3 | 1991 | 1 | 280000 | |
| 8. | Տրակտոր MT3-80 | 1983 | 1 | 200000 | |
| 9. | Էլ շարժիչ A-13-59-4 | 1977 | 2 | 200000 | |
| 10. | Էլ շիթ Բարձր լարման բաշխիչ վահան KPYH KXII | 1971 | 8 | 376000 | |
| 11. | Հիդրոպոմպ | 1990 | 1 | 500000 | |

*«Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար* *. Վերանյան*

## «Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ

### Հայտարարություն

Տեղեկացնում ենք, որ «Կամուրջ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից առաջարկվող սպառողական վարկերը տրամադրվում են անհատական եւ խմբային երաշխավորությամբ, հետեւյալ պայմաններով.

▼ խմբի անդամների քանակ՝ 3-15 անդամ,
▼ ժամկետ՝ 3-18 ամիս,
▼ վարկի գումար՝ 50,000-1,500,000 ՀՀ դրամ,
▼ տարեկան տոկոսադրույք՝ 18%-22% (հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ),
▼ վարկի տրամադրման վճար՝ 1.5%-6%,
▼ սպասարկման վճար՝ 0.2% - 0.5%,
▼ տուժանք՝ օրական 1 % (առավելագույնը 45 օրացուցային օր):

Տեղեկացնում ենք նաեւ, որ «Կամուրջ ՈւՎԿ» ՓԲԸ-ի 2012թ. 1-ին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կարող եք ծանոթանալ www.kamurj.am «Կամուրջ ՈւՎԿ» ՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2012թ. Հունիսի 30 (երկրորդ եռամսյակ)**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 402,330 | 310,880 | 843,272 | 634,443 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (62,622) | (32,530) | (124,002) | (51,745) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **339,708** | **278,350** | **719,270** | **582,698** |
| Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/(վնաս) | (69,320) | 118 | (87,357) | 129 |
| Այլ գործառնական եկամուտներ | 3,218 | 45,730 | 9,559 | 107,573 |
| Այլ գործառնական ծախսեր | (9,378) | (3,856) | (21,220) | (6,883) |
| **Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ** | **264,228** | **320,342** | **620,252** | **683,517** |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | (5,329) | (10,931) | (15,979) | (65,422) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (140,229) | (107,001) | (284,257) | (228,826) |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | **118,670** | **202,410** | **320,016** | **389,269** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 42,544 | 11,998 | 83,175 | 17,910 |
| **Ժամանակաշրջանի շահույթ** | **76,126** | **190,412** | **236,841** | **371,359** |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան* *Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2012թ. Հունիսի 30-ի դրությամբ**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա վերջ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 403,930 | 247,236 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 288,366 | 1,060,868 |
| Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխառություններ | 5,671,839 | 4,591,081 |
| Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 77,431 | 72,558 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | - | - |
| Ստացվելիք տոկոսներ | 51,505 | 57,188 |
| Այլ ակտիվներ | 30,804 | 32,962 |
| **Ընդամենը ակտիվներ** | **6,523,875** | **6,061,893** |
| **Պարտավորություններ** | | |
| Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ | 1,546,432 | 1,234,464 |
| Հաճախորդներից ստացված փոխառություններ | 742,926 | 1,148,595 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ | 5,787 | 139,465 |
| Պահուստներ | 23,194 | 28,794 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 213,023 | 366,970 |
| Վճարվելիք տոկոսներ | 23,360 | 21,995 |
| Այլ պարտավորություններ | 20,738 | 297,318 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **2,575,460** | **3,237,601** |
| **Կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 2,000,000 | 500,000 |
| Լրացուցիչ կապիտալ | 862,264 | 1,474,982 |
| Գլխավոր պահուստ | 42,465 | - |
| Կուտակված շահույթ | 1,043,686 | 849,310 |
| Ընդամենը կապիտալ | 3,948,415 | 2,824,292 |
| Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ | 6,523,875 | 6,061,893 |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան* *Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Հունիսի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ /վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| *Նախորդ ժամանակաշրջան* | | | | | |
| Մնացորդը առ 2010 թ. դեկտեմբերի 31 | 180,000 | 280,857 | | 167,008 | 627,865 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 320,000 | | | | 320,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի աճ | 320,000 | | | | 320,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 682,302 | 682,302 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | | | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն | | 1,194,125 | | | 1,194,125 |
| Մնացորդը առ 2012 թ. դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| *Հաշվետու ժամանակաշրջան* | | | | | |
| Մնացորդը առ 2011 թ. դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 236,841 | 236,841 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | 42,465 | (42,465) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (612,718) | | | (612,718) |
| Մնացորդը առ 2012 թ. հունիսի 30 | 2,000,000 | 862,264 | | 1,043,686 | 3,948,415 |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան* *Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2012թ. Հունիսի 30 (առաջին եռամսյակ)**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| **1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **(281,000)** | **(690,693)** |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը** | **225,594** | **238,885** |
| Ստացված տոկոսներ | 699,151 | 512,628 |
| Վճարված տոկոսներ | (54,893) | - |
| Ստացված տույժեր եւ տուգանքներ | 4,726 | 1,586 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (167,145) | (126,319) |
| Վճարված հարկեր | (256,245) | (149,010) |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից** | **(506,594)** | **(929,578)** |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | (169,958) | (1,531,466) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (336,636) | 601,888 |
| **2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | **(13,943)** | **(32,258)** |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (13,943) | (32,258) |
| **3. դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **438,611** | **580,984** |
| Այլ փոխատուներից ստացված փոխառությունների ավելացում (Նվազում) | 438,611 | 580,984 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | 13,026 | (3,120) |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **156,694** | **(145,087)** |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 247,236 | 458,886 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 403,930 | 313,799 |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան* *Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
**2012թ. Հունիսի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 2,000,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 2,488,084 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ | | | |
| նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) | 39,7% | 10,0% | խախտում առկա չէ |
| Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3 նորմատիվ) | 0,6% | 25,0% | խախտում առկա չէ |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան* *Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 17.7.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: